7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՈՒՐԲԱԹ 178(4796)

Ազգ

Azg

ISSN: 1829-1651

Ֆրանսիայի նախագահը պետական այցով Երեւանում է

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Հեսafrfrական պատահականությամբ, իսկ գուցե եւ ոչ պատահականորեն, ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչի հայտարարությանը՝ «Մինչեւ տարեվերջ ՌԴ միջնորդությամբ չի ակնկալվում Հայաստանի ու Ադրբեջանի ոչ նախագահների, ոչ ԱԳ նախարարների հանդիպում», հաջորդեց Ֆրանսիայի նախագահ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Նիկոլա Սարկոզի պետական այցը Երեւան: Սարկոզիի այցը տարածաշրջանային է, սակայն Երեւանում նա կանցկացնի երկու օր, Թբիլիսին ու Բաքուն Ֆրանսիայի նախագահին կհյուրընկալեն ընդամենը մի քանի ժամով: Այս հանգամանքը, ի դեպ, վրացական «Անկախ փորձագետների ակումբ»-ի նախագահ Սոսո Ցիսկարիշվիլիին «սիրել է» «Մոսկովսկիե նովոստի» պարբերականին ասել, թե «Սարկոզին Հարավային Կովկաս այցի ընթացքում առավել կարեւորում է Հայաստան կատարելիք այցելությունը, քանի որ ֆրանսիական քաղաքական հարթակներում մեծ ազդեցություն ունի հայկական լոբբին»: Որ Սարկոզին իր Երեւան կատարած այցելությամբ շեշտադրումներ է անում ֆրանսահայերին իր կողմը գրավելու համար, մենք գիտենք նաեւ թուրքական մամուլից: Մասնավորապես «Հյուրիեթը» օրեր առաջ գրեց. «Քանի որ կես միլիոն ֆրանսահայերը նախագահական ընտրություններում պաշտպանելու են սոցիալիստ Ֆրանսուա Հոլանդին եւ «նեղացած են» Սարկոզիից ցեղասպանության հարցում, ապա վերջինս խնդիր ունի գրավելու ֆրանսահայերի համակրանքը»: Հենց այս համատեքստում էլ տեղավորվում են երկու փաստերը. նախ՝ Ֆրանսիայի նախագահին Երեւան պետական այցի ընթացքում կուղեկցեն ֆրանսահայության մի շարք անվանի ներկայացուցիչներ, որոնց թվում՝ աշխարհահռչակ Շառլ Ազնավուրն ու Ֆրանսիայի ֆուտբոլի հավաքականի հայազգի նախկին ֆուտբոլիստ Յուրի Ջորկաեֆը (հավանաբար վերջինս նաեւ ներկա գտնվի այսօր կայանալիք Հայաստան-Մակեդոնիա խաղին-Հ. Ա.): Երկուսն էլ այցի նախօրեին հարցազրույցներ են տվել ֆրանսիական մամուլին, մասնավորապես Ջորկաեֆը, ընդգծելով, որ հրավերը անձամբ նախագահ Սարկոզիից է ստացել, նշել էր, որ մեծ հուզմունքով է սպասում «իր ընտանիքի ծագման երկիր» 4-րդ այցելությանը:

Տես էջ 3

Վրացիները չեն գրանցում Ջախալյանի հացադուլի փաստը

Ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Ջախալյանը, որը վրաց իշխանությունների կողմից դատապարտվել է 10 տարվա ազատազրկման եւ ներկայումս պահվում է Վրաստանի Ռուսթավի համար 6 խիստ ռեժիմի բանտում, հեռախոսով տեղեկացրել է «Երկիր» միությանը, որ հոկտեմբերի 5-ին անժամկետ հացադուլ է սկսել:

«Վահագն Ջախալյանը դիմել է հացադուլի ի նշան բողոքի իր նկատմամբ սահմանված անմարդկային եւ արժանապատվությունը նվաստացնող բանտային պայմանների դեմ: Նա պահանջում է դադարեցնել անօրինական ձնշումները եւ բարելավել բանտային պայմանները», տեղեկացնում է «Երկիր» միությունը:

Վահագն Ջախալյանը նաեւ տեղեկացրել է, որ, հակառակ իր պահանջների, բանտի վարչությունը հրաժարվում է գրանցել հացադուլի փաստը:

«**Ազգը**» նախապես տեղեկացրել էր, որ Վահագն Ջախալյանի փաստաբան Ստեփան Ոսկանյանը հայտարարություն էր տարածել՝ նշելով, որ վերջին շրջանում վրացական իշխանությունները ուժեղացրել են ջավախահայ գործչի նկատմամբ բանտային ձնշումները, այդ թվում նաեւ բանտային պայմանների էական խստացման միջոցով:

Ա. Հ.

«Իսրայելը պատնեշի է տարածաշրջանի համար, քանի որ ատոմային ռումբ ունի»

Այդ մասին հոկտեմբերի 5-ին Հարավաֆրիկյան Հանրապետության մայրաքաղաք Պրետորիայում հայտարարեց Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Նա այնտեղ, մասնակցելով «Թուրքիայի արտաքին քաղաքականություն» թեմայով միջոցառմանը, ելույթ ունեցավ, որի ընթացքում Հարավաֆրիկյան Հանրապետությունում Իսրայելի դեսպանատան աշխատակիցը հարցրեց. «Թունելներով Գազա ոչ միայն մթերք, այլեւ զենք են փոխադրում: Դուք ձեր դեսպանին հետ եք կանչել Իսրայելից: Ինչո՞ւ եք նպաստելու խաղաղությանը»:

Էրդողանը, որի ելույթը հեռարձակվում էր Թուրքիայի հանրային հեռուստատեսությամբ, պատասխանեց. «Ես այդ թունելները տեսել եմ: Դրանցով չի կարելի տանկ, հրետանի, ատոմային ռումբ, ֆոսֆորային ռումբ, միջուկային ռումբ անցկացնել: Թունելներով առավելագույնս ատրճանակ կամ հրացան են անցկացնում: Սակայն Գազան պաշարված է տանկերով, հրանոթներով: Դուք այնտեղ ֆոսֆորային ռումբեր եք օգտագործել, ռմբակոծել եք նույնիսկ ՄԱԿ-ի գրասենյակները: Իսրայելը ատոմային ռումբ ունի, բայց չի ասում, լռում է: Բոլորը Իրանի վրա են հարձակվում: Սա՞ է արդարությունը: Իսրայելը պետական ահաբեկչության է դիմում: Ես Իսրայելին համարում եմ տարածաշրջանի համար սպառնալիք, որովհետեւ ատոմային ռումբ ունի»:

Հ. Ջ.

Ղարաբաղի բախումը՝ հայտարարություններով, նաեւ բանաձեւի առաջարկում

Թուրք-ադրբեջանական պատվիրակների շայլերը բավարարում են ուզածդ թուղթ հայտարարություն դարձնելու համար

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հոկտեմբերի 5-ի նիստի ամենավերջին հարց դրված Հայաստանի մասին զեկույցի ավարտին նախագահողը երեք գրավոր հայտարարություն ներկայացրեց, որոնցից երկուսը տարածել էին ադրբեջանցիները, մեկը նախաձեռնել էր Հայաստանի պատվիրակության անդամ Զարուհի Փոստանջյանը:

«**Ազգը**» երեկվա համարում անդրադարձել է ադրբեջանական պատվիրակության ներկայացրած հայտարարությանը, որը դեռեւս չհրապարակված՝ արդեն իսկ տարածել էին ադրբեջանական լրատվամիջոցները, ընդ որում, ակնհայտ սահողությամբ, թե տարածվածը ԵԽԽՎ-ի քննադատությունն է արցախյան ընտրություններին, մինչդեռ, առանձնակի բութերի համար, նույն այդ հայտարարությունների տեքստը սկսվում է «այս գրավոր հայտարարությունը պարտավորեցնում է միայն այն անդամներին, որոնք այն ստորագրել են» պարադիր տողով:

Ադրբեջանցի եւ թուրք վեհաժողովականների, ինչպես նաեւ վրացի, սլովեն ու իտալացի մի քանի պատվիրակների ընդամենը նվազագույն անհրաժեշտ 20 ստորագրությամբ մյուս հայտարարությունն էլ, նախորդի ածող տոկոսային «օկուպացիայի ու փախստականների» փոխարեն մեկ այլ ադրբեջանական անհեթեթություն է առաջ փորձում մղել՝ դատապարտելով իբր «խաղալիքի մեջ դրված պայթուցիկից զոհված ադրբեջանցի երեխայի» մահը:

Փոստանջյանի նախաձեռնած հայտարարությունը ստորագրել է վեհաժողովի 32 պատվիրակ: Ըստ այդմ, գրավոր թիվ 496 հայտարարությամբ պատվիրակները շնորհավորել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 20-ամյակը եւ սերտ համագործակցության կոչ արել ԼՂՀ օրինական ընտրված իշխանությունների հետ: Հայտարարությամբ նշվում է, որ 20 տարի առաջ խորհրդային օրենքների ու միջազգային իրավունքի համաձայն անկախության իրավական որոշում կայացրին ոչ միայն Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, այլեւ Լեռնային Ղարաբաղը՝ իրականացնելով ինքնորոշման իրենց իրավունքը: Մինչդեռ նախորդ երեքի եռ անդամ լինելու պարագայում՝ Արցախը անդամ չէ:

Հայաստանի, Բելգիայի, Ֆրանսիայի, Անդորրայի, Իտալիայի, Ավստրիայի, Նիդեռլանդների, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի, Միացյալ Թագավորության, Սլովենիայի, Իսպանիայի, Սերբիայի պատվիրակները հայտարարության մեջ շեշտել են, որ Արցախը, չնայած բոլոր դժվարություններին եւ առկա վիճակին, «ընդունել ու շարունակաբար հետեւում է պետականակերտման քաղաքական ուղղի՝ Եվրոպայի խորհրդի ոգուն, առաքելությանն ու արժեքներին համահունչ»: Հայտարարությամբ շնորհավորել են Արցախի 20-ամյակը՝ «ԵԱՀԿ Մինսկի խմբի համատեքստում ընթացող բանակցություններին Արցախի պաշտոնական պատվիրակների մասնակցության կարեւորության ընդգծմամբ»:

Տես էջ 2

Էլմար Մամեդյարովի «գյուտը»

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի արտգործնախարարը բացառիկ հարցազրույց է տվել RT հեռուստաընկերության արաբալեզու ալիքին: Դժվար է ասել, թե ինչ ենթատեքստ են դրել դրանում կազմակերպիչներն ու Էլմար Մամեդյարովը: Բայց վերջինս մի շատ արտառոց հայտարարություն է արել. «Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշվի ադրբեջանական եւ հայկական համայնքների, որոնք երբեւէ այստեղ ապրել են կողք կողքի, կողմից՝ միասին: Մենք պետք է առաջին հերթին համապատասխան պայմաններ ստեղծենք, չէ՞ որ քանի դեռ տարածքներն «օկուպացված են», չի կարելի խոսել կարգավիճակը կամավոր որոշելու մասին, ինչը պնդում է հայկական կողմը»:

Տվյալ դեպքում մենք ելնում ենք զուտ տեսականությունից: Գործնականում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որոշված է: Շատ շուտով Արցախում կնշվի սահմանադրության ընդունման հինգերորդ, անկախության հանրաքվեի եւ պետական իշխանության մարմինների ձեւավորման 20-րդ տարեդարձը: Բայց քանի որ Ադրբեջանի արտգործնախարարը բանավեճի նոր թեմա է շրջանառել, ճիշտ չէր լինի այն մատնել անուշադրության:

Տես էջ 8

Կարոլիս Սուրենյան

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Տակավին 24 ժամ էլ չի անցել, եւ ես սիրված այս տողերն եմ գրում պատանեկության ընկերոջս, Կիրովոսի Մելգոնյան կրթական հաստատությունում սկսված ընկերության մասին, ավելի ճիշտ պիտի ըլլա ըսել՝ եղբորս մասին: Քանի որ այն տարիները, երբ մի քանի հարյուր հայ պատանիներ եւ պարմանուհիներ, հավաքված տարբեր գաղթօջախներից, ապրում էին Մելգոնյան կրթական հաստատության սահմաններում, Կիրովոս կղզու մի հողակտորի վրա՝ փշալարերով առանձնացված մարդկային հասարակությունից, անշուշտ նախ եւ առաջ բաժանված իրենց ընտանիքներից, իրենց ամենաթանկագին հարազատներից, կազմվում էր մի նոր ընտանիք՝ տասից քսան տարեկան պատանիներու, որոնք շաբաթուն դառնում էին եղբայրներու եւ քույրերու պես, հարազատանում եւ կապվում իրարու: Եվ կարծեմ, այդ էր դժբախտ ճակատագիրը այդ անբախտներուն, որ մի քանի տարի անց նորից, այդ եղբայրները եւ քույրերը, սիրված, ցավոտ, պետք էր բաժնվեին իրարից: Իրենց նոր ընտանիքից: Դուրս գալով փշալարերի շրջափակումից՝ պիտի վերադառնային իրենց ընտանիքներուն, վերադառնալով կյանք՝ սիրված նորից ապրելու բաժանումի դառը հիշատակը: Մարդուս ապրած ամենատխուր ապրումներեն մեկը, զգացումներեն մեկը, կկարծեմ, որ բաժանումն է սիրելիներե եւ տեղե մը, ուր, օրինակ, ծնվել ես:

Կարոլիսի հետ մեր հանդիպումներեն եւ խոսակցություններեն հիշում եմ մահվան մասին խոսակցություն մը, երբ ինքը, հիշելով հին հույն փիլիսոփայի մը մահվան մասին մտածումները, կրկնում էր՝ ինչո՞ւ վախնալ մահից, մահը ի՞նչ է, ըստ հույն փիլիսոփային՝ երբ կենդանի ես, ուրեմն չես գիտեր ինչ է մահը, իսկ երբ մեռած ես՝ արդեն չես գիտեր ինչ է ողջ ըլլալը: Բայց ահավասիկ երեւի առաջին «մահը» մարդ ապրում է, երբ բաժանվում է սիրելիե մը, հարազատ մը, երբ մարդ կորցնում է հարազատ մը, սիրելի մը՝ կամ հեռանալու պատճառով, կամ մահվան պատճառով. արդեն հո՛ն գիտես ի՞նչ է մահը. հարազատ մը կորցնելով, հարազատի մը հեռանալով, անկե բաժանվելով: Եվ ահավասիկ ես այս տողերը գրած ժամանակս գիտեմ, որ էլ որքան ատեն որ ապրիմ, պիտի չտեսնեմ ընկերս, պիտի չլսեմ իր ձայնը: Մահ բառը իմաստ չունի, բայց բաժանում բառը ամենատխուր իմաստը ունի. կորուստը, բան մը կորցնելը, արժեք մը կորցնելը ամենադառն զգացումն է. եւ անմոռանալի, եւ անհանդուրժելի...



Սակայն, մահվան հաջորդում է հարությունը... Եվ այսպես, 1962 թվականին հանդերձ ընտանյոք հայրենադարձվելով Ս. Հայաստան, ես գտա իմ մելգոնյանցի ընկերներս, որոնցից բաժանվել էի 1941 թվականին:

Տես էջ 6

Հայաստանի զբոսաշրջությունը՝ առավել մրցունակ

Մրցունակությունը որեւէ երկրի զարգացման հիմնական հենք լինելով հանդերձ մի հասկացություն է, որի առկայության դեպքում պետության ու ազգի խնդիրների շաս բնութագրականներ դառնում են խիսս երկրորդական, քանի որ մրցունակ լինելու պարագայում հաշվի են առնվում ոչ միայն մեծ ու փոքր չափերը, տարածքները, այլեւ ծովային ուղիներից օգտվելու դժվարություններն ու այն ամենը, ինչով, որպես կանոն, Հայաստանում փորձում են արդարացնել բոլոր անհաջողությունները:

Իրապես, կան բնական ու նաեւ մեր հարեւանների «թեթեւ ձեռքով» ստեղծված արհեստական դժվարություններ ու բարդություններ, որոնց պայմաններում գործում է Հայաստանի տնտեսությունը, բայց եթե այն մրցունակ լինի, կնշանակի՝ գտնվել են հենց այն ուղղությունները, որ զարգացում կարող են ապահովել: Զորօրինակ, զբոսաշրջությունը, որը Հայաստանում գերակա ճյուղ հայտարարելու մասին բազմիցս լսել ենք, իսկ այդ ուղղությամբ կոնկրետ քայլերը կարծես առավել առարկայական ու նպատակային են դառնում:

Տնտեսության զարգացման համար զբոսաշրջությունը, այն էլ մեզ նման երկրի դեպքում, մեծ դերակատարություն ունի իր ստեղծած տնտեսական տարբեր արդյունքներով:

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, որ նաեւ Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, զբոսաշրջության միջազգային օրվա կապակցությամբ սեպտեմբերի 30-ին նշեց Հայաստանի զբոսաշրջության զարգացման ներուժի մասին, որ, սակայն, «դեռեւս լիովին չի օգտագործվում», հավելելով, որ «զբոսաշրջությունը մեր երկրում կարող է եւ պետք է լինի բազմազան եւ բազմաբովանդակ»:

Հենց այդ ուղղությամբ մի քայլ. Իտալիայի Ռիմինի քաղաքում այս օրերին մեկնարկել է TTG INCONTRI զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսը, որին Հայաստանը ներկայացնում է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը, ի դեպ, մեծապես ողջունելի նորությամբ. մասնակից է նաեւ Լեռնային Ղարաբաղը, որի զբոսաշրջային ռեսուրսները ներկայացնելու հարցում հիմնադրամը շարունակելու է աջակցությունը:

Մի քանի օր առաջ էլ մրցունակության հիմնադրամը Իտալիայի Վենետո մարզի, Վենետիկի առեւտրի պալատի եւ Սուրբ Ղազարի Մխիթարյան միաբանության հետ համատեղ, Վենետիկում էր կազմակերպել Հայաստանի եւ Վենետո մարզի միջեւ զբոսաշրջության խթանմանը նվիրված աշխատանքային համաժողով, իսկ նոյեմբերին նախատեսվում է պատասխան համաժողովի կազմակերպումը Երեւանում: Դրանից առաջ էլ նույն հիմնադրամը Հայաստանը ներկայացրել էր Գերմանիայի զբոսաշրջային գործակալների միության համաժողովում եւ Ֆրանսիայում TopResa՝-2011 զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսին: Բացի դրանից՝ ճանաչում եւ կշիռ ունեցող National Geographic Traveler ամսագիրը, միջազգային քվեարկության արդյունքում, «ակտիվ, այդ թվում՝ էքսրեմալ հանգիստ» անվանակարգում Հայաստանն ընդգրկել էր երեք առաջատար երկրների շարքում:

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ մտադրությունն, ըստ որի Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը զբոսաշրջությունն ընդունել է որպես առաջնահերթություն՝ ոլորտը պահելով ուշադրության կենտրոնում, քայլերի տրամաբանական շարունակությամբ ընթանում է: Կատարված աշխատանքն էլ հույս է ներշնչում, որ Հայաստանի մրցունակության ապահովման ուղղությամբ ավելի կոնկրետ քայլեր կձեռնարկվեն՝ նպաստելով Հայաստանի՝ որպես զբոսաշրջության վայրի միջազգային ճանաչելիությանը, դրա միջոցով էլ խթանելով Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Թուրք ոստիկանությունը ձերբակալել է ֆրանսահայ լրագրող Տիգրան Եկավյանին

«Ենի Շաֆք» թուրքական թերթը հոկտեմբերի 4-ի համարում տեղեկացնում էր, որ Դիարբեքիր քաղաքում ոստիկանները ձերբակալել են 2 ֆրանսահայերի՝ տեղի PKK-ի հետ կապեր ունենալու մեղադրանքով: Նրանցից առաջինը «**Ազգի**» հատուկ թղթակից եւ Փարիզում լույս տեսնող «France-Arménie» հանդեսի աշխատակից Տիգրան Եկավյանն է (որդին՝ Գ. Գյուլբենկյան հիմնարկության հայկական բաժնի տնօրեն Զավեն Եկավյանի), իսկ երկրորդը՝ ծագումով Թուրքիայից էյուպ Սուլթան Դեմիրչիկը: Թեթի տվյալներով, խուզարկության ընթացքում երկու ֆրանսահայերի մոտ, իբր, գտնվել են փաստաթղթեր, որոնք փաստում են քրդական PKK-ի հետ նրանց ունեցած սերտ հարաբերությունները:

Բարեբախտաբար, տարբեր միջամտությունների շնորհիվ, հաջորդ օրը, հոկտեմբերի 5-ին, Տիգրան Եկավյանն ազատ է արձակվել եւ նույն օրը վերադարձել է Փարիզ:

Մանրամասնությունները՝ առաջիկայում:

Շահերի բախումը՝ հայտարարություններով, նաեւ բանաձեւի առաջարկում

1-ին էջից

Բացահայտել շահերի բախումը

ԵԽԽՎ ներկայացված եւս մեկ հայաստանյան նախաձեռնություն, ի դեմս **Դավիթ Հարությունյանի**, բանաձեւի առաջարկ է՝ «ԵԽԽՎ-ում շահերի բախումների բացահայտման մեխանիզմի ամրապնդում» ձեւակերպմամբ:

«Իրենց պարտականություններն իրագործելիս վեհաժողովի անդամները պետք է խստորեն պահպանեն թափանցիկության եւ հաշվետվողականության սկզբունքները», ասվում է բանաձեւի առաջարկում: Որպես թափանցիկության ու հաշվետու լինելն ապահովելու ռազմավարություն առաջարկվում է օգտագործել շահերի բախումների բացահայտման կենսունակ մեխանիզմներ, ինչպիսիք կիրառելու փորձ արդեն իսկ ԵԽԽՎ անդամ որոշ երկրներ ունեն:

Շեշտելով, որ թեեւ անդամների շահերի հրապարակմանն ու թափանցիկությանը վերաբերող համապատասխան նորմեր ու փաստաթղթեր արդեն իսկ կան վեհաժողովում, այդուհանդերձ, վեհաժողովի՝ վստահելի դիրքերում գտնվող անդամների «հնարավոր կասկածելի գործողությունների նշանները հստակորեն ցույց են տալիս, որ շահերի բախման խնդիրը դեռեւս առկա է վեհաժողովում»:

Բանաձեւի առաջարկում հիշեցնում կա ԵԽԽՎ 1908 հանձնարարականի պարագրաֆներից մեկին, որի համաձայն, պետք է դադարեցվեն կանոնները, որ վերաբերում են քաղաքական գործիչներին, քաղաքացիական ծառայողներին, ճնշման խմբերի ու բիզնեսի անդամներին, ներառյալ շահերի պոտենցիալ բախումների սկզբունքը: Ընդ որում, այս համատեքստում լոբբիստական գործողությունների իրականացումը պետք է արգելվի: Առաջարկվում է այս կանոնը իրագործել ամբողջությամբ: Ուստի բանաձեւի առաջարկը հրամայական է համարվում վեհաժողովի համար, որ քննարկվի ընթացակարգի կանոնների վերանայումը՝ հաշվի առնելով շահերի բախումների բացահայտման շոշափելի մեխանիզմի օգտագործումը:

Բանաձեւի առաջարկի հետագա ճակատագիրը որոշելու է ԵԽԽՎ բյուրոն, որ այսօր առավոտյան նիստում, ի թիվս այլ նմանատիպ առաջարկների, հնարավոր է, որ քննարկի նաեւ Հարությունյանի ներկայացրածը: Իսկ եթե ժամանակային առումով դա հնարավոր չլինի, Դավիթ Հարությունյանի բանաձեւի առաջարկը կմնա քննարկելու բյուրոյի հաջորդ ամիս կայանալիք նիստում:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ

Փիզիկական անձինք այլեւս հայտարարագրեր չեն ներկայացնի

Կառավարությունը երեկվա նիստում հաստատել է ֆիզիկական անձի տարեկան եկամուտների հաշվարկի ձեւը: Ըստ վարչապետ Տիգրան Սարգսյանի պարզաբանման, 15 հազար պետական ծառայողներից այլեւս չեն հավակնելու հայտարարագրեր: Ընդունված օրենքի տրամաբանությունն այն է, որ անհրաժեշտության դեպքում նրանք իրենց եկամուտների մասին հարկման նպատակով տեղեկություն կներկայացնեն պարզեցված կարգով՝ տարեվերջին, իսկ թիրախն արդեն դառնում են 500 բարձրաստիճան պաշտոնատար անձինք: Նրանց նկատմամբ էլ հսկողությունն իրականացնելու է նոր ձեւավորվող էթիկայի հանձնաժողովը:

Ա. Մ.

ՀԱԿ-ը մերժել է Խանամիրյանի հոգեհանգստի համար վրանները 3 ժամով հանելու առաջարկը

ՀՀ մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը** երեկ, ըստ tert.am կայքէջի, այցելել է Ազատության հրապարակ եւ ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանին փոխանցել Վանուշ Խանամիրյանի մահվան կապակցությամբ ստեղծված հանձնաժողովի խնդրանքը՝ հոկտեմբերի 8-ին՝ ժամը 11:00-14:00-ը հանել ՀԱԿ-ի շուրջօրյա հանրահավաքի համար տեղադրված վրանները՝ ժողովրդական արտիստ Վանուշ Խանամիրյանի քաղաքացիական հոգեհանգստի անցկացումը պատշաճ ապահովելու համար:

Արթուր Պողոսյանը կայքէջին տեղեկացրել է, որ հանձնաժողովը որոշել էր քաղաքացիական հոգեհանգիստը կազմակերպել Ալ.Սպենդիարյանի անվան օպերային եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի նախասրահից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդկային մեծ հոսք է սպասվում: Արամ Մանուկյանը մշակույթի փոխնախարարին ասել է, որ ՀԱԿ-ը հարցն արդեն քննարկել է եւ որոշել, որ վրանները չեն հանելու:

Նրանք նշեցին, որ լավագույն դեպքում հնարավոր է աջ եւ ձախ տեղաշարժել վրանները ու միջանցք բացել կամ արգելափակոցներով ուղղություն բացել դեպի «Մեղեդի» սրճարան:

Արթուր Պողոսյանը բարոյական տեսակետից անհասկանալի է որակել ՀԱԿ-ի պատասխանը, քանի որ «Վանուշ Խանամիրյանը ողջ հանրության կողմից սիրված անձնավորություն է, ժողովրդական արտիստ, եւ անհրաժեշտ է նրա հոգեհանգիստը պատշաճ կազմակերպել»:

«**Ազգ**»-ի կարծիքով, մերժելով հանձնաժողովի խնդրանքը, ՀԱԿ-ը կորցրեց մի հարմար առիթ մեծանուն արվեստագետի եւ ընդհանրապես արվեստի հանդեպ իր հարգանքը ցույց տալու հաշվ իր համակիրների ու ողջ ժողովրդի: Ափսոս:

ՀՊՄՀ-ն կհամագործակցի ՌԴ-ի գիտակրթական հաստատությունների հետ

Հոկտեմբերի 6-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում ՀՀ-ում «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային գործակալության ներկայացուցչության եւ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջեւ ստորագրվեց կրթության ոլորտի համագործակցության պայմանագիր:

Համագործակցության պայմանագիրը ենթադրում է համատեղ ծրագրերի իրականացում ՀՊՄՀ-ի եւ ՌԴ գիտական ու կրթական հաստատությունների միջեւ, ինչպես նաեւ նյութատեխնիկական բազայի համալրում ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով, կրթության որակի բարձրացման նպատակով վերապատրաստման դասընթացների անցկացում, գիտական եւ ուսումնական գրականության թարգմանություններ եւ հրատարակություններ:

Համագործակցության պայմանագիրը ստորագրեցին ռուսական կողմից ՀՀ-ում ՌԴ դեսպանության խորհրդական, ՀՀ-ում «Ռոսսոտրուդնիչեստվո» դաշնային գործակալության ներկայացուցչության ղեկավար **Վիկտոր Կրիվոպուսկովը**, հայկական կողմից՝ ՀՊՄՀ ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը**:

Ընտրավորանք

Վրաստանի Հանրապետությունում գործուղման մեջ գտնվող մեր աշխատակից Մարիետա Խաչատրյանը շնորհավորում է թոռան՝ Նարեկ Միխայելյանի երեքամյակը, ցանկանում երջանիկ մանկություն եւ իմաստալի չափահասություն:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ադրբեջանական բանակը «դիմավորում է» ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Սարկոզիին

Ինչպես տեղեկացրել էինք երեկվա համարում, իմիջ ընդունելով ԼՂՀ պաշտպանության բանակի տարածած հաղորդագրությունը՝ հոկտեմբերի հինգին ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծում հակառակորդ կողմից արձակված կրակոցից գլխի շրջանում ստանալով հրազենային մահացու վիրավորում, զոհվել է ՊԲ զինծառայող Յուրի Արամի Սարգսյանը: Նույն օրը պարզ դարձավ, որ ադրբեջանական կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով ՀՀ Տավուշի մարզի Ջինարի գյուղի ուղղությամբ տեղակայված մարտական հենակետում հրազենային վիրավորում են ստացել ժամկետային զինծառայողներ Հենրիկ Ռաֆիկի Խաչատրյանը եւ Խաչատուր Հրանտի Սուքիասյանը:

Այս կապակցությամբ ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար Դավիթ Կարապետյանը հանդես է եկել հայտարարությամբ. «Ադրբեջանական կողմի դիպուկահար գործողություններից հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը փաստում են, որ Ադրբեջանը ոչ միայն արհամարհում է հրադադարի ռեժիմը պահպանելու միջազգային հանրության կոչերը, այլեւ վտանգում է տարածաշրջանային փխրուն կայունությունը՝ ինքնաբերաբար պատասխանատվություն կրելով բոլոր անցանկալի հետեւանքների համար»:

Մյուս կողմից, ինչպես տեղեկանում ենք «ԱՊԱ» ադրբեջանական գործակալությանը տված հարեւան երկրի ՊՆ մամուլի քարտուղար Թեյմուր Աբդուլաեւի հայտարարությունից, «Հայկական կողմը հերթական անգամ խախտել է հրադադարի ռեժիմը՝ տարբեր ուղղություններով: Ադրբեջանական կողմի համարժեք գործողություններից հակառակորդը ստիպված է եղել դադարեցնել կրակը: Սակայն պարբերական բնույթ կրած փոխհրաձգությունից ռազմաճակատում զոհվել են ադրբեջանական բանակի երկու զինծառայողներ՝ 20-ամյա Նովրուզ Գարյագդի օղլի Ալիեւը եւ «հրաստաղ ծառայության» շարքային 22-ամյա Սուլեյման Աբբաս օղլի Ասկերովը: Նախարարությունը վստահեցնում է, որ հակառակորդի կորուստներն ավելի շատ են», «գոտեմարտ» վստահեցնումով իր խոսքն ավարտել է Ադրբեջանի ՊՆ մամուլի խոսնակը:

Թերեւս այս անգամ մանրամասնորեն չանդրադառնանք ՀՀ եւ ԼՂՀ պաշտպանական գերատեսչությունների ու Ադրբեջանի ՊՆ-ի հայտարարությունների տեքստերում տեղ գտած տերմինների վերլուծությանը: Միայն ընդգծենք, որ, եթե, օրինակ, հայկականում գործածվում է «հակամարտ զորքերի շփման գիծ», ապա ադրբեջանականում այդ տերմինն ունի «ռազմաճակատ» անվանումը. սա թերեւս պարզ վկայություն է, թե որ կողմում են ավելի լավ նախապատրաստում իրենց հասարակություններին «խաղաղության, այլ ոչ պատերազմի», ինչպես բացեիբաց պահանջել, հորդորել էին Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարները Դովիլում արած հայտարարությունում: Իսկ թե ինչո՞ւ է հրադադարը խախտվում, այն էլ այսպես կոպտորեն հենց հիմա, սրա պատասխանն էլ կա. երեկ մեկնարկեց ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահող Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի պետական այցը Հայաստան: Մեր երկրում երկու օր մնալուց հետո Սարկոզին մի քանի ժամով կլինի նաեւ Բաքվում ու Թբիլիսիում: Հավանաբար Փարիզը ներկայացնելու է ԼՂ հակամարտության կողմերին նոր կամ վերափոխված հին, կամ նույն հին առաջարկությունները, իսկ ինչպես արդեն գիտենք, Բաքուն մշտապես այդ ընթացքում կամ դրանից հետո իրականացնում է նման գործողություններ, բացի դրանից՝ Իլհամ Ալիեւը հնարավոր է, որ այս քայլով եւս մեկ անգամ ապացուցում է միջազգային հանրությանը՝ ի դեմս շահագրգիռ Ֆրանսիայի նախագահի, որ «պատերազմը ավարտված չէ», «հարցը պետք է լուծվի մեր ուզածով»: Մնում է միայն սպասել՝ տեսնելու, թե որքանո՞վ հաճելի կլինի Նիկոլա Սարկոզիին, որ իրեն տարածաշրջանում առաջինը «դիմավորեց» Ադրբեջանի բանակը:

Հ. ԱՓՅԱՆ

Այսօր կբացվի Շառլ Ազնավուրի կեցավայրը Երեւանում

Այսօր նախատեսվում է ֆրանսահայ անվանի երգիչ Շառլ Ազնավուրի կեցավայրի պաշտոնական բացման արարողությունը, որին ներկա կլինեն Ֆրանսիայի եւ Հայաստանի նախագահները ու անձամբ՝ Ազնավուրը: Նախօրեին լրագրողները առաջինը շրջեցին այդ հրաշալի կառույցում, հիացան Երեւանի համայնապատկերով, իսկ որ ամենագլխավորն էր՝ շենքի երեք կողմերից ամբողջությամբ երեւում էր դեպի երկինք խոյացող Արարատը, պարզ ու հստակ, ձյունածածկ գագաթով: Շենքի նախագծի հեղինակ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը (անվճար, որպես նվիրատվություն նախագծել ու հեղինակային հսկողություն է սահմանել) մանրամասն բացատրություններ էր տալիս, թե յուրաքանչյուր հարկ եւ սրահ ինչ նպատակի է ծառայելու: Կառույցը զբաղեցնում է 1000 քմ տարածք եւ գտնվում է Կասկադի հյուսիսարեւմտյան կողմում, ունի խիստ թեքություն: 1000 քմ տարածքի վրա չորս հարկերն ու նաեւ ստորին հարկերը միասին կազմում են 1700 քմ: 2007-ի վերջերին սկսված շինարարական աշխատանքները ավարտվել են 2009-ին եւ կառավարության մի շարք որոշումներով պետբյուջեից կառույցին տրամադրվել է 678.091 մլն դրամ:

«Այս տարածքի ընտրությունը մենք արել ենք ելնելով այն հանգամանքից, ասաց պրն Սարգսյանը, որ այն գտնվում է քաղաքի կարեւորագույն առանցքում ու նաեւ ընդամենը այդ առանցքից 50 մետր հեռու է Ֆրանսիական հրապարակը: Հաշվի առնելով, որ իր տիպի մեջ առաջին անգամ է նման կառույցի կառուցումը, որը դասական իմաստով թանգարան չէ, բնակելի տուն չէ եւ ծրագրվել է այնպես, որ ինչ-որ բան խորհրդանշի: Հաշվի առնելով, որ Շառլ Ազնավուրի կեցավայրն է, ռեզիդենցիան, գաղափարը եղել է այնպես, որ մուտքը դեպի թանգարան բաց է տարածական դարպասներով, որոնք խորհրդանշում են մուտքը դեպի «Արարատյան երկիր»: Կառույցում կա երկու ննջասենյակ, աշխատասենյակ, խոհանոց՝ իր բոլոր հարմարություններով. զբաղեցնում են երկու հարկը: Դեպի ներքեւ կա երեք յարուս: Մեկը՝ կծառայի որպես Ազնավուրի կյանքին ու ստեղծագործական ուղուն նվիրված ցուցասրահ-թանգարան, որն ունի առանձին մուտք դրսից, ցուցադրվող բոլոր նյութերը անձամբ Ազնավուրն է ընտրել, ու դրանք արդեն Հայաստանում են: Մյուսը ընդունելությունների սրահն է, որը միաժամանակ կծառայի հանդիպումների ու համերգների անցկացմանը՝ 120-150 տեղով: Ներքեւում վարչատնտեսական նշանակության սենյակներն են: Իսկ քաղաքի համայնապատկերի վրա բացվող հանդիսավոր սանդուղքները, միաժամանակ ծառայում են որպես ամֆիթատրոն բացօթյա համերգների կազմակերպման համար»:

Մեկուկես տարի առաջ, երբ նախատեսվում էր կառույցի բացումը (որը հետաձգվեց Կասկադի վերին հատվածի անավարտ շինարարության պատճառով), Ազնավուրը իր ընտանիքի անդամների հետ այցելել է կառույց, մանրամասն դիտել ու գոհ վերադարձել: Իսկ երբ կառույցի համար տարածք էր փնտրվում, հենց այս հատվածում Ազնավուրը զգացել է հողից եկող ջերմություն ու ասել է. «Սա է իմ հողը»: Եվ ահա այսօր այդ հայրենի հողի վրա վեր է խոյացել յուրօրինակ կառույց՝ դառնալով Շառլ Ազնավուրի «Արարատը տեսնեմ իմ տան պատուհանից» երազանքի կատարումը:

Կառույցին տրանսպորտով կարելի է մոտենալ միայն Անտառային փողոցից, իսկ հետիոտնի մոտեցումը՝ Կասկադ համալիրից: Առայժմ ցուցանմուշներից միայն լուսանկարներ են ցուցադրված, իսկ թանգարանը ամբողջությամբ բաց կլինի ավելի ուշ, եւ անընդհատ, բոլոր սրահներում կինչի երաժշտություն:

Այս հրաշալի կառույցը Հայաստանի նվերն է Շառլ Ազնավուրին: Շենքը ՀՀ սեփականությունն է:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՅԺ

Ֆրանսիայի նախագահը պետական այցով Երեւանում

1-ին էջից

Ինքը՝ Սարկոզին, նախքան Երեւան այցելելը «Մեդիամաքս» գործակալությանը տված բացառիկ հարցազրույցում ընդգծել էր. «Ֆրանսիան հպարտ է, որ առաջինն է պաշտոնապես ճանաչել Ցեղասպանությունը օրենքի ուժով... եւ ամեն ոք պետք է համարձակություն ունենա կոչել այն իր անունով՝ ցեղասպանություն»: Բացի այն, որ Սարկոզին իր այս ձեւակերպմամբ առավելաբար «խոսում էր» ֆրանսահայերի հետ, Ֆրանսիայում նախագահի գլխավորած կուսակցությունը՝ UMP-ն, հիշեցրել է ֆրանսահայերին, որ սոցիալիստները, որոնց նախագահական թեկածու Ֆրանսուա Հոլանդին պաշտպանում են Սարկոզիից «հիասթափված» ֆրանսահայերը, հենց այն կուսակցության ներկայացուցիչներն են, որոնք «մինչեւ հիմա համարձակություն չեն ունեցել ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Բացի սրանից՝ սոցիալիստների մեծամասնությունը ցանկանում է չխոչընդոտել Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցությանը: Հետեւաբար սոցիալիստների՝ ձեզ հասցեագրված խոսքումները պարզապես ամբոխավարություն են, այլ ոչ թե ժողովրդավարություն: Մենք ձեզ կոչ ենք անում չընկնել սոցիալիստների ծուղակը»: Փաստորեն՝ Սարկոզին իր Երեւան կատարած պետական այցով առավելապես նպատակ ունի գրավել կեսմիլիոնանոց ֆրանսահայ համայնքը, հակառակ պարագայում ի՞նչը պետք է ստիպեր Ֆրանսիայի նախագահին եվրոգուտու համար այս դժվարին օրերին, նախագահական ընտրությունների եւ ընտանիքում համալրման շեմին այցելել Հայաստան, Հարավային Կովկաս:

Սակայն, անշուշտ, Սարկոզին տարածաշրջանում է նաեւ որպես Մինսկի խմբի համանախագահ: «**Ազգը**» արդեն անդրադարձել է նկատվող ֆրանսիական ակտիվությանը՝ ԼՂ հիմնահարցի միջնորդական ջանքերում: Պարզապես նկատենք, որ «Մեդիամաքսին» այս կապակցությամբ Ֆրանսիայի նախագահը ասել էր. «Հաճախ ավելի խիզախություն է հարկավոր խաղաղություն հաստատելու, քան պատերազմը շարունակելու համար: Չկա ավելի մեծ վտանգ, քան ստատուս քվոյի պահպանումը, որը ծնում է պատրանքներ, հրահրում վրեժխնդրություն եւ ամեն օր ավելի հեռացնում խաղաղության հասնելու հնարավորությունները: Ոչ մի երկիր չգիտի, թե ինչ է ԼՂ-ն Հայաստանի համար, Ֆրանսիայից լավ: Ժամանակն է լուծել հակամարտությունը, ես այս հորդորը փոխանցելու եմ նաեւ Բաքվում՝ նախագահ Իլհամ Ալիեւին, սակայն մենք կարող ենք ուղեկցել ձեզ, բայց չենք կարող խաղաղություն հաստատել ձեր փոխարեն», ահա եւ ֆրանսիական ակտիվության եւս մեկ ապացույց, եւս մեկ վկայություն, որ Սարկոզին տարածաշրջան է բերում «առաջարկություններ», մասնավորապես նա «հորդորելու է Բաքվում Իլհամ Ալիեւին», ու եւս մեկ «եվրոպական ընդգծում», որ ստատուս քվոն ամենամեծ վտանգն է: Սարկոզիի՝ խաղաղաբեր առաքելությանը անդրադարձել է նաեւ France 24 պարբերականը, նշելով, որ Ֆրանսիայի նախագահը կոչ է անում Հայաստանին ու Ադրբեջանին՝ «խաղաղության ռիսկի գնալ եւ վերսկսել ԼՂ վիճարկելի տարածքի վերաբերյալ բանակցությունները»: Այստեղ էական մի տարր կա՝ «վերսկսել բանակցությունները...», փաստորեն հենց Սարկոզին պետք է փորձի միջնորդը լինել այս նոր «վերսկսմանը»: Բացի սրանից՝ ֆրանսիական պարբերականը, պատմելով ԼՂ-ի մասին, ընդգծում է. «ԼՂ-ն որպես լեռնային տարածք հիմնականում բնակեցված է եղել հայերով եւ սովետական տարիներին տրվել է Ադրբեջանին»: Ուշագրավ ընդգծում է, այնպես չէ՞...

Ինչեւէ՝ Սարկոզիի այցին ավելի մանրամասնորեն կանդրադառնանք հաջորդ համարում, այժմ նշենք միայն, որ Ֆրանսիայի նախագահը երեկ հանդիպումներ ունեցավ նախագահ Սերժ Սարգսյանի, Գարեգին Երկրորդ Վեհափառի հետ, եղավ Մեծ Եղեռնի հուշահամալիրում, ծառ տնկեց: Երեւանում նախագահ Սարգսյանի հետ Սարկոզին կմասնակցի Շառլ Ազնավուրի տուն-թանգարանի բացմանը եւ, ի նշան հայ-ֆրանսիական բարեկամության, Հայաստանին կնվիրաբերի Օգյուստ Ռոդենի Լը'պաժի արձանը: Այսօր հենց վերոհիշյալ արձանի բացման արարողության ժամանակ՝ առավոտյան ժամը 10-ին Երեւանում Ֆրանսիայի հրապարակում Նիկոլա Սարկոզին ելույթով կդիմի Հայաստանին ու հայ ժողովրդին. «Այս կապակցությամբ Ֆրանսիայի Հանրապետության նախագահը ուրախ կլիներ, որ Ֆրանսիայի հրապարակը համախմբեր հայերի, որոնք հնարավորություն կունենան լսելու նրա ուղերձը, որի հայերեն թարգմանությունը կիեռարձակվի մեծ պաստառի վրա», տեղեկացնում են ֆրանսիական դեսպանատնից:

Ֆրանս Տելեկոմ Orange խմբի նախագահը Հայաստանում

Ֆրանս Տելեկոմ Orange խմբի նախագահ եւ գլխավոր տնօրեն Ստեֆան Ռիշարը հոկտեմբերի 6-ին ժամանեց Հայաստան Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզիի պետական այցի շրջանակներում պաշտոնական պատվիրակության կազմում:

Հայաստանյան իր այցի ընթացքում Ստեֆան Ռիշարը կունենա մի շարք հանդիպումներ, որոնց թվում նաեւ Orange Արմենիայի թիմի հետ:

Այսօր Ստեֆան Ռիշարը Orange-ի գլխավոր խանութում կհյուրընկալի մի շարք պաշտոնական անձանց, այդ թվում՝ Ֆրանս-հայկական գործարար ակումբի անդամներին, ինչպես նաեւ Ֆրանսիայի արդյունաբերության, էներգետիկայի եւ թվային տնտեսության նախարար Էրիկ Բեսոնին ու Ֆրանսիայի արտաքին առեւտրի գծով պետական քարտուղար Պիեռ Լելուշին: Այնուհետեւ նա կմասնակցի Երեւանի Ֆրանսիայի հրապարակում Հայաստանի եւ Ֆրանսիայի նախագահների կողմից ֆրանսիացի նշանավոր քանդակագործ Օգյուստ Ռոդենի հեղինակած արձանի պաշտոնական բացման արարողությանը: Արձանը, որը Ֆրանսիայի նվերն է Հայաստանին, ձեռք է բերվել Ֆրանս Տելեկոմ Orange-ի աջակցությամբ, ի նշան Հայաստանի նկատմամբ Orange-ի նվիրվածության:

Այսպես կոչված «այսպես կոչվածի» մասին

Գուցե նույնիսկ ուշացումով եմ գրում այս մասին, որովհետեւ հարցը ոչ միայն վաղուց գոյություն ունի, այլեւ չափազանց կենսունակ է եւ գնալով ավելի այլանդակ ու անընդունելի բովանդակություն է սանում: Որպես արդարացում պիտի ասեմ, որ այժմ միայն գրելուս պատճառը երեւի շատերիս բնորոշ հայկական մտածողությունն է, երբ մենք միամտաբար կարծում ենք, թե դիմացինի հիմարությունն անգամ ամոթ է ցուցադրելը, իսկ բանականությունը, անշուշտ, միշտ հաղթանակում է: Ցավոք, ներկայիս իրականության մեջ բոլորովին այլ չափանիշներ են գործում, որոնք վարպետորեն գործածողները, ուշադիր չլինելու դեպքում, ոչ միայն ազգային արժանապատվությանդ են վիրավորանք հասցնում, այլեւ պատմությունդ եւ հայրենիքդ խլելու հավակնություն են ցուցաբերում: Ընդ որում, առանց աչքը ճպելու, առանց գիտնականի պատմուճանը ուսից գցելու:

Այդպիսիք հաճախ հայերիս չարախոսում, մինչեւ անգամ մեղադրում, նացիոնալիստ ու շովինիստ են համարում Մեծ Հայք անունը հիշատակելու համար: «Մեծ» բառը նրանց կատաղեցնում է, ինչը, սակայն, չեն էլ կամենում թաքցնել, քանզի, ըստ իրենց, փոքր ժողովուրդները իրավունք չունեն մեծ բաների մասին խոսելու: Զավեշտալին այն է, որ նման խրատ իրեն «մեծ» ազգի ներկայացուցիչ համարող վրացին է հիմնականում տալիս «փոքր» ազգի ներկայացուցիչ հային: Այո, վրացի կեղծ հայրենասեր մտավորականն իր մեծամտությամբ ու ամբարտավանությամբ իսկապես փոքրանք է դարձել եւ, կարծում ենք, առաջին հերթին սեփական ժողովրդի գլխին: Նա անընդհատ ականներ է տեղադրում մի դաշտում, որտեղ գցված է նաեւ վրաց ազգային անվտանգության հիմքը:

Ական են պատրաստում նաեւ խեղաթյուրված պատմությունից, եւ այս առումով հարկ է, որ կրկին դառնանք մեր Մեծ Հայքին: Տարական ճշմարտություն է, որ Հայոց երկիրը Մեծ Հայքի եւ Փոքր Հայքի բաժանումը կատարվել է ոչ թե մեր, այլ հույների, հռոմեացիների կողմից: Նման աշխարհագրական եւ վարչատարածքային բաժանումները նրանցն են: Նշանակում է՝ հայհոյախոսողները ցույց են տալիս իրենց անգրագիտությունը եւ պատմական կարճ հիշողությունը: Ընթերցողին ներկայացնենք, թե ինչի մասին է խոսքը: «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակում գրված է. «Այն տերիտորիան, որտեղ ձեւավորվել են հայ ժողովուրդը եւ նրա լեզուն ու մշակույթը, երկու հիմնական մասից է բաղկացած, որոնք հայտնի են «Մեծ Հայք» եւ «Փոքր Հայք» անուններով: Մեծ Հայքը ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի տերիտորիան ամբողջապես, իսկ Փոքր Հայքը տարածվում էր Փոքր Ասիայի արեւելյան մասում: Հայաստանի այս երկու հիմնական հատվածները միմյանցից բաժանվում էին Եփրատ գետով, որը այս մասում հոսում է հյուսիսից հարավ՝ սկսած այժմյան Ակնից մինչեւ Մալաթիայից հարավ-արեւելք գտնվող Եփրատի գալարը: Եփրատից այս կողմ գտնվող հայկական թագավորությունը կոչվեց Մեծ Հայք ի տարբերություն Եփրատից այն կողմ գտնվող մյուս հայկական թագավորության, որը ավելի փոքր տարածություն էր ընդգրկում եւ կոչվեց Փոքր Հայք: Հունական եւ հռոմեական աղբյուրներում Մեծ Հայքի թագավորությունը անվանվում է Armenia Maior, իսկ վաղ միջնադարի հայկական աղբյուրներում միշտ գործ է ածվում Մեծ Հայք անունը: Սրանց հետ նույնանիշ է մ. թ. առաջին դարերի պարթեւական արձանագրություններում պատահող Vazug Armenan հորջորջումը: 387 թ. հետո, երբ Հայկական թագավորությունը բաժանվեց, եւ Մեծ Հայքը դադարեց գոյություն ունենալ իբրեւ միաձույլ պետություն, այս անվան փոխարեն գործ էին ածվում Հայք, Armenia տերմինները, իսկ Եփրատից այն կողմ գտնվող հայկական երկիրը շարունակում էր կոչվել Փոքր Հայք (Armenia Minor): Սակայն հետագայում եւս ավանդության ուժով երբեմն գործ էր ածվում նաեւ Մեծ Հայք տերմինը բուն Հայաստանի իմաստով: Հայկական աղբյուրների այդ հորջորջումը պահպանել են միջնադարյան պատմաբանները, արաբերեն եւ պարսկերեն աղբյուրները՝ Buzurg Armenan ձեւով, վրացականները՝ «Դիդի Սոմխեթի», եւ նույնիսկ ռուսականները՝ Арменьа Великая ձեւով:

Մեծ Հայքն ընդգրկել է շուրջ 320.000 կմ քառակուսի տարածություն: Այդ սահմաններում Հայաստանը քաղաքական, էթնիկական եւ տնտեսական մեկ ամբողջություն էր եւ դարերի ընթացքում ձեւավորվեց այն ներքին վարչական բաժանումը, որը պայմանավորված էր առաջին հերթին երկրի ռելիեֆով»1:

Երկու հողում եւս կատարենք: Համենայն դեպս, ուշադրություն դարձնենք այս հրատարակությունների տարեթվերին: Ի. Շոթեն. «Հույներն ու հռոմեացիները միշտ բավարարվում էին Հայաստանը ընդհանուր ձեւով Մեծ եւ Փոքր Հայքի բաժանելով»2: Ա. Աննինսկի. «Մեծ Հայքից Թադեոսը ճանապարհ ընկավ դեպի Փոքր Հայք»3:

Իսկ հիմա տեսնենք, թե ինչպես վրաց ինտելիգենցիան, փորձելով ազգային ոգի ներարկել իր ժողովրդին, ամեն անգամ կտրուկ տեղից վեր է ցատկում, երբ խոսք է գնում հարեւան հայ ժողովրդի տարածքային (նաեւ մշակութային) ժառանգության մասին: Նրանց արտահայտություններն են. «Նրանք (հայերը - Հ. Դ.) խոսքով եւ գրչով ողջ աշխարհին երդվում են, թե հնուց անտի Կովկասյան լեռնաշղթայից այս կողմ մինչեւ Տիգրիսի եւ Եփրատի ակունքները, գրեթե Սեւ ծովից մինչեւ Կասպից ծով եղել են այսպես կոչված Հայաստան»4, «1918 թ. Սամբուլում տպագրվեց Հայաստանի (իբր թե պատմական) ֆանտաստիկ մի քարտեզ, որտեղ համայն Հայաստանի սահմանները ձգվում են Սեւ ծովից մինչեւ Կասպից ծով եւ... Միջերկրական ծովերը»5, «Հայ գիտնականները լուրեր էին տարածում, թե գոյություն է ունեցել Մեծ եւ Փոքր Հայք: Այս անհեթեթ մտքի պսակը 1918 թ. Սամբուլում տպագրված քարտեզն է, որտեղ Վրաստանի մեծ մասը Հայաստանի կազմի մեջ է մտցված»6:

Ուշագրավն այն է, որ երբեմն սերնդի ներկայացուցիչներից (այն էլ՝ խոշոր ներկայացուցիչներից) կատարած մեջբերումների տոնը նույնն է՝ հարձակողական, լկտի եւ սահող: Այստեղ բացահայտվում է վրացի մտավորականների զարմանալի մի առանձնահատկություն եւս. նրանք ոչ միայն չեն վախենում տգեղ երեւալուց, այլեւ հրապարակավ ցուցադրում են դա: Դժվար է ասել՝ նրանք գիտե՞ն արդյոք, որ կան բազմաթիվ աշխարհագրական անուններ, երկրանուններ, որոնք ունեն «Մեծ» բաղադրիչ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիա, Մեծ Կաբարդիա, Մեծ Կովկաս, Մեծ Մասիս, Մեծ կամ Խաղաղ օվկիանոս, Մեծ Անթիլյան կղզիներ եւ այլն: Չեն՞ք կարծում, թե այսքանն իմանալու համար հատուկ դժվարություններ է պետք հաղթահարել, սակայն վրացի պատմաբանների համառությանը հանդիպելով համոզվում ենք, որ նրանց հիվանդության ախտորոշումը ոչ թե անընկալունակությունն է, այլ պարզապես հայատյացությունը: Երբ «ժողովրդի մտքերը փոթորկող» ականավոր բանաստեղծ Իլյա Ճավճավաձեն էր գուցե գինովցած գրում «այսպես կոչված Հայաստան»7, կարելի է համարել, որ դա մեկ հոգու գործած տխմարություն է, բայց երբ հեղինակային մի ամբողջ կոլեկտիվ, հիմնականում ակադեմիկոսներ (Ն. Բերձենիշվիլի, Վ. Դոնդուա, Մ. Դումբաձե, Յու. Կաչավա, Գ. Մելիքիշվիլի, Շ. Մեսխիա, Պ. Ռատիանի), գրում է նորից «այսպես կոչված Մեծ Հայք» եւ այն էլ դպրոցական դասագիրք կազմելիս, հասկանում ես, որ սա նպատակաուղղված քաղաքականություն է եղել: Ահա կարդանք. «Իրենց տիրույթների անկախությունը հռչակեցին Հայաստանի կառավարիչները՝ Սելեւկյանների նախկին սատրապներ Արտաշեսը եւ Զարեհը, որոնք դարձան թագավորներ, վերջինը՝ Ծոփքում, իսկ առաջինը՝ դրանից արեւելք՝ այսպես կոչված «Մեծ Հայքում»... Արեւմտյան հայկական պետության՝ այսպես կոչված «Փոքր Հայքի» կառավարիչներին այն ժամանակ հաջողվեց տիրանալ վրացական ցեղերով բնակեցված որոշ շրջանների»8:

Դժվարանում ենք ասել, թե 1960-ականներին Հայաստանի գիտությունների ակադեմիայի կամ մեկ ուրիշ կառույցի կողմից այս եւ բազմաթիվ այլ խեղաթյուրումների դեմ բողոք ինչ՞ է, պահանջ եղե՞լ է, որ դրանք հանվեն դպրոցական դասագրքերից: Փոխարենը կարող ենք հավաստիացնել, որ ցանված սերմերն առատորեն աճել են: Տասնամյակներ շարունակ «այսպես կոչվածը» վրացու գիտակցության մեջ սահմանազերծել է Հայաստանը, տասնամյակներ շարունակ վրացու գիտակցության մեջ ներարկվել է, որ նախկին հայկական հողերը այսօր «բուն վրացական հողեր» են: Եվ այժմ բնավ տարօրինակ չէ, որ վրացի պատմաբաններն իրենց աշխատություններում հենց գրում են Տայքի, Կղարջքի կամ Տաշիրի մասին, անդայման շեշտում են՝ «բնիկ վրացական տարածք»9:

Բայց սա դեռ բոլորը չէ: Շուրջ երեք տարի առաջ համացանցում տեղադրվեց Վրաստանի պատմությունը ուսուցանելու ստվարածավալ մի ձեռնարկ՝ բաղկացած 3 մասից: Այն իրականացրել են Թբիլիսիի պետ. համալսարանի պատմության ֆակուլտետի Վրաստանի պատմության ամբիոնից պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Վաչնաձեն, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Գուրուլին եւ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Բախտաձեն10: Թվարկված հեղինակները ոչ միայն «այսպես կոչված», այլեւ «բուն վրացական հողեր» դարձվածից են բավականին առաջ անցել, նրանք տարածքային պահանջներ են ձեւակերպում: Նյութը ծավալուն չդարձնելու մտահոգությունից ելնելով, չենք ներկայացնում Տայքի, Կղարջքի, Արդահանի, Բասենի, Զավախքի, Հյուսիսային Լոռու, ինչպես նաեւ այդ տարածքներում գտնվող «վրացական» պատմաճարտարապետական հուշարձանների մասին նշումները: Բերված քաղվածքները վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը, ասել է թե՝ հայկական ոչ թե պատմական, այլ պետական տարածքներին: Համոզվենք դրանում.

- Պատմականորեն Վրաստանի կազմի մեջ մտնում էին հետեւյալ տարածքները... հարավ-արեւելքում՝ Դեբեդ գետի կիրճը, որտեղ սահմանն անցնում էր Լոռի-Փամբակի լեռնաշղթայով (էջ 3): Կրկնությունը տե՛ս «Վրաստանի հիմնական պատմական մարզերի քարտեզ» հավելվածում:

Ինչպես վկայում են նաեւ հայկական պատմական ժամանակագրությունները (Փավստոս Բուզանդ, Հովհաննես Դրասխանակերտցի եւ ուրիշներ), նյութական մշակույթի հետքերը, վրացիները տարածված էին նաեւ Վրաստանի հարավային մասի բնիկ վրացական տարածքներում (Քվեմո-Քարթլի), Լոռեի եւ Տաշիրի շրջաններում, որոնք հիմա կազմում են Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասը (էջ 13):

Անդրկովկասում 1918 թ. դեկտեմբերի վերջերին Անգլիայի զինվորական առաքելության ավարտից հետո Հայաստանի եւ Վրաստանի միջեւ պատերազմական գործողությունները դադարեցին: Բնիկ վրացական տարածք Լոռվա շրջանը հայտարարվեց չեզոք գոտի (էջ 217):

Անջատվեցին եւ Հայկական ԽՍՀ (այժմ կազմում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասը) կազմում ընդգրկվեցին Հարավային Վրաստանի (Քվեմո-Քարթլի) բնիկ վրացական տարածքներ Լոռեի եւ Տաշիրի շրջանները (անցյալում կազմում էին Թիֆլիսի նահանգը, Քարթլի-Կախեթի վրացական թագավորությունը), որտեղ գտնվում են երկրամասի պատմության վկա վրացական միջնադարյան ճարտարապետության հուշարձաններ, գրականության մեջ Ախթալա, Քոբերի, Ակոռի անուններով հայտնի եւ այլ տաճարներ, որոնք մտնում էին Վրաց Ուղղափառ եկեղեցու Տաշիր-Ազարակի թեմի մեջ (էջ 228):

«Էթնոաշխարհագրական անունների բառացանկը» հավելվածից.

- Բամբակի - մարզ հարավային Քարթլիում

- Քարթլի Ստորին (Քվեմո-Քարթլի) - Քարթլիի հարավարեւելյան երկրամասերը. Բոմբակի, Տաշիրի, Սոմխիթի, Աբոցի:

- Լոռե - քաղաք եւ բերդ հարավային Քարթլիում, Տաշիրիում:

- Տաշիրի - մարզ հարավային Քարթլիում:

- Շամշադիլու, Շամշադիլո - երկրամաս հարավային Քարթլիում:

- Հարավային Վրաստան. դրա մեջ մտնում են պատմական վրացական մարզ Քվեմո-Քարթլին (Ստորին Քարթլի), ինչպես նաեւ դրա մասը կազմող Լոռեն եւ Տաշիրին եւ Զավախեթի մարզը: Ներկայումս Լոռեն եւ Տաշիրին գտնվում են Հայաստանի սահմաններում:

Ահա եւ այդ տարածքային պահանջը քարտեզի տեսքով.

Այսքանից հետո, եթե որեւէ մեկն ասի, թե հայերը հրեշ են, ո՞վ կզարմանա: Եվ Վրաստանում այսօր ոչ զարմացող կա, ոչ էլ նման բաներ ասողի պակաս: Բոլորը լսել են, որ հայերը ավելի վատն են, քան հրեշները, նրանք թշնամիներ են: Գ. Մայսուրաձեն «Многонациональная Грузия» թերթում գրում է. «Հայերը վրացիների պատկերացմամբ յուրօրինակ թշնամու կերպար» են, մոտավորապես այնպիսին, ինչպիսին հրեաներն են շատ երկրներում: Հակահայ բնույթի արտահայտություններ լիուլի հանդիպում են ինչպես կենցաղային խոսակցության մեջ, այնպես էլ վրաց դասականների երկերում, բուլվարային մամուլում եւ քաղաքական բանավեճերում: Եթե ուզում եք որեւէ մեկին վարկաբեկել, բավական է նրան հայ հայտարարել»11:

Ահա թե ինչ դարձավ այդ անմեղ թվացող «այսպես կոչվածը»: Ի՞նչ անել: Բարդ է կոնկրետ որեւէ բան ասելը: Բարդ է, որովհետեւ մեր մեղքն էլ կա դրա մեջ: Սովետական ժամանակաշրջանը ընդհանուր էր ե՛ւ հայի, ե՛ւ վրացու համար, բայց արի տես, որ «հայ եւ վրաց ժողովուրդների եղբայրությունը» արգելք չէր վրացու համար ազգային մեծ թե փոքր հարցերով ձայնը գլուխը գցել ամբողջ Միության մեջ, իսկ հայը «խաթրից» դուրս չգալու համար արժանապատվորեն լռում էր12: Այդ արժանապատիվ լռությունն էլ ծնեց այս անհարգալից վերաբերմունքը: Սրա հետեւանքն է եւ այն անպատշաճ ընդունելությունը, որին վերջերս արժանացավ Ամենայն հայոց կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը Վրաստանում: Եվ որպեսզի վերջապես վերջ դրվի ստեղծված դրությանը, առաջին հերթին հարկավոր է չլռել: Տվյալ դեպքում լռությունը ոսկի չէ: Իսկ ձայն բարձրացնելու համար, փառք Աստծո, ունենք պետական մարմիններ, որոնք ընդամենը պետք է նախանձախնդրություն հանդես բերեն: Ինքնահարգանքը նաեւ դիմացինին է հարգանք պարտադրում:

Կրկնում ենք, նշյալ աշխատությունը հրապարակել է Թբիլիսիի պետհամալսարանը, այսինքն՝ արտահայտում է Վրաստանի գիտական

Միջազգային

շրջանակների եւ իշխանությունների պաշտոնական տեսակետը[13]: Այդ տեսակետը ոչնահարում է հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը եւ Հայաստանի Հանրապետությանն ուղղված տարածքային հավակնություններ է պարունակում: Ով կլինի մեր կողմից պահանջ ներկայացնողը՝ ՀՀ կառավարությունն ինքը, արտաքին գործերի նախարարությունը, թե՞ կրթության եւ գիտության նախարարությունը, ըստ էության, նշանակություն չունի: Կարեւորը նման ոտնձգությունները անհետեւանք չթողնելն է, այս պարագայում՝ պահանջել, որպեսզի հիշատակված եւ համանման հատվածները հանվեն համացանցում տեղադրված «Վրաստանի պատմությունից»: Սա եկեղեցիների պատկանելության հարց չէ, որ վիճելի համարվի:

ՀԱՄԼԵՏ ԶԱՎԱԹՅԱՆ

ԵՊՀ ՀՀԻ վրացագիտության հայկական կենտրոնի գիտաշխատող

1. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երեւան, 1971, էջ 55-56:
2. Шопен И., Исторический памятник состояния Армянской области в эпоху ея присоединения к Российской империи, СПб, 1852, с. 12.
3. Аннинский А., История Армянской церкви (до XXI века), Кишинев, 1900, с. 4.
4. Чавчавадзе И., Армянские ученые и вопиющие камни, Тифлис, 1902, с. 1.
5 Իվանե Ջավախիշվիլու արխիվից, տես Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990), նյութերի ժողովածու, կազմեց՝ Հ. Բայրամյանը, Երեւան, 2001, էջ 58:
6. Ախուաշվիլի Ի., Ներքին Քարթլիի էքոնոմը պատմական տեսանկյունից, «Մնաթոբի», 1989, թիվ 10, էջ 134-144 (տե՛ս վերոնշյալ նյութերի ժողովածուն):
7. Чавчавадзе И., Армянские ученые и вопиющие камни, ч. 1, Тифлис,1902.
8. История Грузии, учебник для VII-X классов средней школы, под редакцией Н. Бердзенишвили, Тбилиси, 1960, с. 31-32.
9. Лордкипанидзе М., Грузия во второй половине V века, Тбилиси, 1978, с. 10.
10. Вачнадзе М., Гурули В., Бахтадзе М., История Грузии (с древнейших времен до наших дней), www.fictionbook.ru
11. В. Максоева, Кому выгодна армянофобия в Грузии? “Голос Армении 30.07.2011.
12. 1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի հազարամյակի տոնակատարության շրջանակներում լույս տեսավ էպոսի պատումների առաջին հատորը, որից, սակայն, Հայաստանի ակադեմիայի նախագահության պահանջով դուրս էին մնացել այն հատվածները, որոնք իբր ուղղված էին Վրաստանի դեմ (տե՛ս Սարգսյան Վ., Հայոց էպոսը Վրաստանի հետ հարաբերությունների չկայացման պատճա՞ռ, www.armar.am, 16.12.2010):

Մյուս դեպքը ճարտարապետ Տիրան Մարությանի վկայությունն է. «Տողերիս գրողի «Տայքի ճարտարապետական հուշարձանները» գրքի լույս ընծայումը 1970 թ. երկու տարով կասեցվելուց հետո լույս տեսավ 1972 թ., սակայն նրա 5000 օրինակներից մոտ 4000-ը ոչնչացվեց Հայաստանի եւ Վրաստանի կոմկուսների կենտկոմների գաղափարական գծով քարտուղարներ Ռ. Խաչատրյանի եւ Պետուրայի ջանքերով» («Ազգ-մշակույթ», 05.03.2011): Եվ սրանք ընդամենը օրինակներ են հայկական գիտությունը կազմակերպողների օրինակելի վարքից:

13. Ասվածը նորություն չէ: Մի քանի տարի առաջ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը նույնպես հայտարարեց, որ վրացիների թշնամանքը հայերի հանդեպ պետական քաղաքականություն է («Հայոց աշխարհ», 31.05.2008):

Թյուրքալեզու հանրապետությունների անկախության 20-ամյակին նվիրված միջոցառում Անկարայում

Դա անցել է «Մեկ ազգ, վեց պետություն» կարգախոսով

Մերձավոր եւ Միջին Արեւելքում առանցքային դեր ստանձնելու թուրքական հավակնությունները հայտնի են: Սակայն ավելի քան հայտնի է, որ Թուրքիան այդ դերը կստանձնի այն դեպքում միայն, եթե Մ. Նահանգները հատկացնի նրան: Թերեւս դա է պատճառը, որ Լիբիայի եւ Սիրիայի հարցերում Հռոմի պապից ավելի կաթոլիկ երեւալու մղումով նա հարձակման թիրախ է դարձնում նախագահներ Մուամմար Քադդաֆիին եւ Բաշար Ասադին, որոնց հետ մինչ այդ սերտ բարեկամական հարաբերություններ էր պահպանում:

Ավելին, հոկտեմբերի 4-ին մինչ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ռուսաստանի ու Չինաստանի վետոյի պատճառով տապալվում էր Սիրիային դատապարտող բանաձեւը, որը նաեւ պատժամիջոցներ էր ենթադրում, հաջորդ օրը Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, գտնվելով պաշտոնական այցով Հարավաֆրիկյան Հանրապետությունում, հայտարարում է. «Ահավասիկ երեկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում քվեարկության դրվեց բանաձեւը: Մշտական անդամներից երկուսը վետո դրեցին: Այսպիսով ցավալիորեն տապալվեց նախագգուշացման բնույթ կրող այդ բանաձեւը: Իհարկե, այս վետոն խոչընդոտ չէ Թուրքիայի պատժամիջոցների համար: Կամա թե ակամա մենք շրջանառության մեջ ենք դնելու Սիրիայի համար նախատեսվող պատժամիջոցների փաթեթը»:

Վարչապետ Էրդողանը փաթեթի մանրամասներին չանդրադարձավ: Կանդրադառնա հոկտեմբերի 9-ին, երբ կայցելի սիրիացի փախստականների համար Հաթայի մոտակայքում տեղակայված ճամբարը: Սակայն ինչպիսին էլ լինեն պատժամիջոցները, տարածաշրջանում առանցքային դեր չեն ապահովի Թուրքիային: Ոչ էլ հոկտեմբերի 5-ին Անկարայում թյուրքալեզու հանրապետությունների անկախության 20-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառում կազմակերպելը կօգնի Թուրքիային ազդեցության տակ վերցնելու Հարավային Կովկասն ու Միջին Ասիան: Ազդեցությունը դեռ մի կողմ, Թուրքիային նույնիսկ չի հաջողվում դիրքեր ամրապնդել այս հանրապետություններում: Մինչդեռ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նա 1991-92 թթ. թյուրքալեզու հանրապետությունների համագործակցություն ստեղծելու հույսեր էր փայփայում:

Նրա հույսերը եւս պայմանավորված էին ԱՄՆ-ի եւ եվրոպական մեծ տերությունների աջակցությամբ: Իսկ աջակցությունը բխում էր Ռուսաստանի հետ հավանական առճակատումից խուսափելու համար Հարավային Կովկասում եւ Միջին Ասիայում Թուրքիայի միջոցով գործելու, այսինքն՝ ռուսական գործոնին թուրքականը հակադրելու այդ տերությունների հաշվարկներից:

1990-ականներին Թուրքիան ոչ միայն դիրքեր չամրապնդեց թյուրքալեզու հանրապետություններում, այլեւ, ապատան տալով ընդդիմության ներկայացուցիչներին, խզման եզրին հասցրեց Ուզբեկստանի հետ հարաբերությունները, որոնք առ այսօր չեն բարելավվում: Ղազախստանն ու Ղրղզստանը, որդեգրելով ռուսամետ արտաքին կողմնորոշում, քաղաքականապես Ռուսաստանի ազդեցության տակ են: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա 1997-ին Մ. Նահանգները, հայտարարելով Հարավային Կովկասը «կենսական շահերի գոտի», հրաժարվեց Թուրքիայով միջնորդավորված գործունեությունից:

Ապա ռուսական գերազդեցության տարածքներում երբեմնի դիրքերը վերականգնելու առաջադրանքով հետզհետե ապարեզ իջավ Ռուսաստանը: Ռուս-վրացական առճակատման վերածված հարավօսական պատերազմից հետո նրա դիրքերն աննախադեպ ուժեղացան Հարավային Կովկասում՝ մասնավորապես Ադրբեջանում:

Չհաշված Հայաստանի նկատմամբ թշնամանքն ու հայատյացությունը, «մեկ ազգ, երկու պետություն» Թուրքիան եւ Ադրբեջանը ունեն լուրջ տարաձայնություններ, ընդհուպ Իսրայելի նկատմամբ դիրքորոշման հարցում: Չնայած Անկարայի համառ պահանջներին, «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» առումով Բաքուն ոչ մի կերպ չի ընդառաջում թուրք եղբայրներին: Թուրքական սերիալների հետ ադրբեջանական հեռուստաընկերություններում արգելվում է նաեւ թուրքերեն լեզվով հաղորդումների հեռարձակումը: Երկրում փակում են Թուրքիայի կառուցած մզկիթները, իջեցնում թուրքական դրոշը, նույնիսկ հրաժարվում են փոխադարձաբար վերացնել վիզային ռեժիմը թուրքերի նկատմամբ:

Այս ամենը, սակայն, չի խանգարել Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին թյուրքալեզու հանրապետությունների անկախության 20-ամյակի հանդիսություններին մասնակցելու, մասնավորապես ասելով. «Մենք մի մեծ ազգի առանձին պետություններն ենք: Պետք է գործենք «Մեկ ազգ, վեց պետություն» սկզբունքով: Անշուշտ, իրար պետք է հարգենք, սիրենք, բայց գլխավորը համերաշխությունն է: Դա առաջիկայում լինելու է մեր գլխավոր փորձությունը: Նրանք, ովքեր համերաշխ չեն եւ միայնակ են մնում, չեն կարող հաղթահարել իրենց առջեւ ծառացած դժվարությունները: Համերաշխության մեջ լինելը չի մթագնի իրավահավասարությունն ու փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունները»:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Իսպանիան միացավ եվրոպական հակահրթիռային համակարգին

Մոսկվան «անընդունելի» է համարում նման քայլերը

Իսպանիան համաձայնել է մասնակցել ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության եվրոպական համակարգին, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Համապատասխան համաձայնագրի ստորագրման մասին մամլո ասուլիսում հայտարարել են Իսպանիայի վարչապետ Լուիս Ռոդրիգես Սապատերոն, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը եւ ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Լեոն Պանետան:

Վերջինիս խոսքերով՝ հակահրթիռային պաշտպանության ամերիկյան «Իջիս» համակարգով եւ հակահրթիռներով զինված 4 ռազմանավ կտեղաբաշխվի իսպանական Ռոտա քաղաքի ռազմակայանում (Կադիսի նահանգ):

Հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգը, որի շրջանակներում կնքվել է համաձայնագիրը, նախատեսում է սկզբում կառավարելի զենիթային ռեակտիվ արկեր տեղաբաշխել Միջերկրական ծովի ռազմանավերում, իսկ հետագայում հակահրթիռային պաշտպանության վերգետնյա համակարգեր տեղադրել Ռումինիայում, Լեհաստանում եւ Չեխիայում: Բացի դրանից, ԱՄՆ-ը արդեն համակարգի տարրերի տեղաբաշխման վերաբերյալ համաձայնագրեր է կնքել Թուրքիայի եւ Հոլանդիայի հետ:

Նախատեսվում է ՆԱՏՕ-ի եվրոպական հակահրթիռային համակարգը գործարկել 2012-ին, իսկ ամբողջ համակարգի ծավալումը պետք է ավարտվի մինչեւ 2018 թվականը: ԱՄՆ-ի ներկայացուցիչների խոսքերով՝ համակարգի գլխավոր խնդիրն է պաշտպանություն առահովել Իրանի եւ ԿԺԴՀ-ի հրթիռային վտանգից:

Սակայն Ռուսաստանը Եվրոպայում հակահրթիռային համակարգի ծավալումը համարում է վտանգ սեփական անվտանգության համար: ՌԴ ԱԳՆ-ում ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին ասել են, որ առանց բոլոր շահագրգիռ երկրների կարծիքը հաշվի առնելու Իսպանիայի ափերի մոտ հակահրթիռային համակարգ տեղադրելը անընդունելի է: «Եթե իրադարձություններն այսուհետեւ էլ ընթանան նույն հունով, ապա Ռուսաստան-ՆԱՏՕ խորհրդի լիսաբոնյան գագաթաժողովում ստեղծված՝ առճակատումը համագործակցության վերածելու հնարավորությունը ձեռքից բաց կթողնվի», նշվում է ՌԴ ԱԳՆ մեկնաբանության մեջ:

ՀԱՇՄԱՐԵՂ ՄԱՐԴԸ

Մահացել է Սթիվ Ջոբսը



ԱՄՆ-ում երկարատեւ հիվանդությունից հետո 56 տարեկան հասակում մահացել է Apple կորպորացիայի հիմնադիր Սթիվ Ջոբսը: Նա վերջերս էր թողել գլխավոր տնօրենի պաշտոնը:

Apple-ի հրապարակած հաղորդագրության համաձայն, Ջոբսը տառապում էր ենթաստամոքսային գեղձի քաղցկեղից: Ռոյթեր գործակալությունը մեջբերում է հաղորդագրության հետեւյալ հատվածը. «Սթիվի արտասովոր ունակությունները, խանդավառությունն ու եռանդը դարձան անթիվ նորարարությունների աղբյուր, որոնք հարստացրին եւ բարելավեցին ամենքիս կյանքը»:

Սթիվ Ջոբսը այս տարվա հունվարին առողջական վիճակի պատճառով անժամկետ արձակուրդ էր վերցրել, իսկ օգոստոսին թողել էր Apple-ի գլխավոր տնօրենի պաշտոնը: Ըստ «Ֆորբս» հանդեսի, նա 2011-ին աշխարհի միլիարդատերերի ցանկում զբաղեցնում էր 178-րդ տեղը (6 մլրդ դոլար):

Ջոբսը 1970-ականների վերջերին Apple II-ի առաջին նախագծողներից մեկն էր, իսկ 80-ականներին ստեղծեց մկնիկով աշխատող առաջին համակարգիչը՝ Macintosh-ը: 1984-ին նա հեռացավ Apple-ից եւ հիմնեց NeXT ընկերությունը, որը համակարգչային ծրագիր է մշակում բուհերի եւ գործարարների համար: 1985-ին Ջոբսը դարձավ Pixar անիմացիոն ստուդիայի հիմնադիրներից մեկը, 2006-ին ձեռք բերեց «Ուոլթ Դիսնեյ» ընկերությունը, դարձավ դրա խոշորագույն մասնավոր բաժնետերը: Նրա ղեկավարությամբ ստուդիան թողարկեց «Խաղալիքների պատմություն» եւ «Հրեշների կորպորացիա» ֆիլմերը: 12 տարի անց Apple-ը գնեց NeXT-ը, եւ Ջոբսը կրկին դարձավ իր հիմնած առաջին ընկերության ղեկավարը: Նա ստեղծեց iPhone-ը եւ iPad-ը:

Պ. Ք.

Ռամալլահում կոշիկներ են նետել ամերիկացի հյուպատոսի վրա

Պաղեստինյան ինքնավարության Ռամալլահ քաղաքում մի խումբ ցուցարարներ հարձակվել են այն ավտոմեքենայի վրա, որտեղ Արեւելյան Երուսաղեմում ԱՄՆ-ի հյուպատոս Դանիել Ռուբինշտեյնն էր: Բողոքելով ԱՄՆ-ի մերձավորարեւելյան քաղաքականության դեմ, ցուցարարները կոշիկներ են նետել ավտոմեքենայի վրա: Այդ մասին հաղորդում է «Ռեշետ Բետ» ռադիոկայանը:

Ֆրանսպրեսը հաղորդում է մեկ ուրիշ միջադեպի մասին, երբ 25 պաղեստինցիներ Ռամալլահի հանդիսարահներից մեկում փչացրել են պաղեստինյան ոչ կառավարական կազմակերպություններին ամերիկյան դրամաշնորհների հանձնման արարողությունը: Ցուցարարները վանկարկել են «Ամո՛թ» բառը եւ բռնել են պաստառներ «Մեզ պետք չեն ձեր ողորմությունները» մակագրությամբ: Ցույցի մասնակիցներն այդ ձեւով են արձագանքել Պաղեստինի 200 մլն դոլար տնտեսական օգնությունը սառեցնելու ԱՄՆ Կոնգրեսի որոշմանը:

Ազնիվ գրականության մակը

Կարոլիս Սուրենյանը, բուն ազգանունով՝ Սարկավագյան, երեւույթ էր մեր իրականության մեջ՝ երեւույթ էր թե՛ կյանքում եւ թե՛ գրականության մեջ:

Եղեռնից փրկված ակտեհիրցի ծնողների զավակը ծնվել էր Հունաստանում, աչք էր բացել Պարթենոնի սյուների տակ, եւ հունական ողորկ ու մշակված մարմարը ձեւավորել էր իր հոգին, զգացողությունը, ճաշակը, մտածողությունը, մի խոսքով՝ իր անձն ու էությունը: Իր կրթությունը խորապես հայեցի էր ու բարձր, նկարագիրը՝ անթերի ու իսկական մտավորականի նկարագիր, մարդկային իր վարքն ու պահվածքը հիմնված էին բարոյական ամենաբարձր սկզբունքների վրա:

Կարոլիս Սուրենյանը ընտանիքով 1946 թվականին եկել էր հաստատվելու Հայաստանում: Բարեկիրթ ու մշակված խոսքի տեր (խոսքը ինքը մարդն է), հոգեկան նուրբ խառնվածքով, ընտիր ու գեղեցիկ գրականությամբ դաստիարակված եւ ձեւավորված երիտասարդը գալիս է հաստատվելու Հայաստանում, ճիշտ է, Սովետական Հայաստանում, բայց Հայաստանում: Աթենքում ծնված Կարոլիս Սուրենյանի համար Հայաստանը հայրենիք էր եւ նվիրական հայրենիք: Իր ծնողների ու մեծավորների հետ երիտասարդ Կարոլիսը անտրտունջ տանում է ներգաղթած սփյուռքահայերին բաժին ընկած բոլոր դժվարություններն ու տառապանքները: Բայց Արարատյան դաշտի լույսն ու Արարատ լեռան վսեմական գեղեցկությունն ավելի զորավոր էին, քան ռեժիմի փորձություններն ու համատարած համակենտրոնացման ճամբարի դժոխքը: Ես չգիտեմ մի այլ մտավորականի, մի այլ գրողի, որ այդքան սիրով հետիոտն անցած լիներ Հայաստանի գրեթե բոլոր ճանապարհներով, շրջած լիներ Հայաստանի գրեթե բոլոր անկյունները, այցելած եւ ուսումնասիրած լիներ հնավայրերն ու պատմական եւ ճարտարապետական հուշարձանները, իմանար եւ ճանաչեր Հայաստանի բնությունն ու Հայաստան երկիրն այնպես, ինչպես գիտեր հայրենադարձ Կարոլիս Սուրենյանը:

Իսկական հայը այդպես է սիրում իր հայրենիքը:

Բազմաշնորհ մարդ էր գրող Կարոլիս Սուրենյանը: Հրաբալի՝ պրոֆեսիոնալ երաժշտի ու երաժշտագետի պես գիտեր հայ հոգեւոր երաժշտությունն ու հայ դասական երաժշտությունը՝ Եկմալյան, Կոմիտաս, Կարա-Մուրզա եւ մնացած բոլորը, հրաբալի գիտեր եվրոպական դասական երաժշտությունն ու երաժշտական մշակույթը առհասարակ: Վերջապես, տասնյակ տարիներ երգել էր Հայաստանի պետական քառաձայն երգչախմբում եւ «Արվեստ» ամսագրում վարել էր երաժշտության բաժինը:

Նույն խորությամբ ու քաջատեղյակությամբ գիտեր համաշխարհային արվեստը առհասարակ՝ ճարտարապետություն, կերպարվեստ, քանդակագործություն... Մանավանդ՝ հայ ճարտարապետություն եւ հայ կերպարվեստ: Էլ չասեմ, որ հին հունական մշակույթը, մանավանդ փիլիսոփայությունն ու էսթետիկան իր թուլությունն էին, իր հին ու մնայուն սերը:

Կիրթ, վայելուչ խոսքի, հոգեւոր բարձր մշակույթի եւ հարուստ ներաշխարհի տեր մարդ էր Կարոլիս Սուրենյանը, լեզուների եւ մշակույթների գիտակ, կարդացած եւ մեծ զարգացում ունեցող անձնավորություն:

Գրողական անուրանալի ձիրք եւ թարգմանչական արվեստի բացառիկ տաղանդ ունեցող Կարոլիս Սուրենյանը այսօր թողնում է հարուստ գրական ժառանգություն՝ տասը հատորից ավելի ինքնուրույն եւ տասը հատորի չափ թարգմանական գրականություն: «Բնիկ որտեղացի՞ ես», «Արեւորդիներ», «Երանության կղզին», «Հին պատմություն», «Ճիշտը կյանքն է», «Օրագիր. 1943-2001»-ի երկու փառահեղ հատորները եւ մյուս իր գրքերը վավերական արժեքներ են, իսկ Դոստոեւսկու «Կարամազով եղբայրներ» վեպի, Գոլսուորդիի «Ֆորսայթների պատմությունը» վիպաշարի, ինչպես նաեւ «Պսակ թարգմանական» գրքում ընդգրկված իր թարգմանությունները՝ թարգմանական արվեստի գլուխգործոցներ: Եվ այնուամենայնիվ Հայաստանի գրական միջավայրը տասնյակ տարիներ նրան յուրային չի համարել՝ չարժանացնելով նույնիսկ սովետական հերթապահ մի գրախոսականի: Եվ սա, անշուշտ, Կարոլիս Սուրենյանի առավելությունն էր ու գերազանցությունը խղճուկ եւ ճահճային միջավայրի հանդեպ: Ափսոս որ սովետահայ գրական գեներալները թույլ չտվեցին, հնարավորություն չտվեցին գրողին ավարտելու Դոստոեւսկու մյուս վեպերի եւ Ֆլոբերի «Մադամ Բովարիի» թարգմանությունները: Ֆլոբերի գրից ժամանակին հարյուր հիսուն էջի չափ արդեն թարգմանել էր: Հոմո սովետիկուսի երկիրն էր, սովետական գրական արտադրանքի ու քարոզչական գրականության ժամանակներն էին: Հիմա անվերադարձ անցել են ե՛ւ այդ գրական խոտանը, ե՛ւ քարոզչական գրականությունը, ե՛ւ դրանց գովերգողները, մինչդեռ վարպետ խոսքի ներհայեցողական մտածողության իր գրականությունը տեւելու է եւ իր արժանի տեղն է ունենալու մեր գրականության մեջ:

Նա մեկ տողով անգամ տուրք չի տվել որեւէ ռեժիմի: Ազնիվ մարդության իր գրականությունը պարզված էր գորշ միջակության եւ գռեհկության միջավայրին իբրեւ արդար անհաշտություն:

Իր այնքան սիրելի Ծաղկաձորի լեռներն ու անտառները, Ծաղկաձորից Սեւան տանող դաշտային ճանապարհները եւ հայրենի հողի բոլոր արահետները սիրով պահելու են իր ոտնահետքերը, Հաղպատն ու Սանահինը, Մարմաշենն ու Թանահատը, Աշտարակի Կարմրավորն ու Արածո Սուրբ Աստվածածինը, որ ժողովուրդը կոչում է Սուրբ Կարապետ, պահելու են իրենց կամարների տակ իր երգած շարականների ու արեւագալի երգերի սրբազան հնչյունները:

Այսօր ձեր արժանավոր նվիրյալն ու հայ գրի հոգնած ուխտավորը գալիս է դեպի ձեզ, գալիս է հանգչելու ձեզ հետ, հայ անանուն վարպետներ եւ դու՝ Անանուն Լմբատեցի... Ընդունեք եւ պահպանեք ձեր որդուն:

Թող հայրենի հողը մայրական գիրկ եւ երկնային մահիճ լինի նրան...

ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լռություն...

Այգին աշնանային՝ խմբագրության ճանապարհի, հիշողության պահապան դարձավ այլեւս: Քայլերս զգույշ դարձան հանկարծ, ասես մեկը շշուկով հետեւում էր կամ կողովս անտես քայլում: Ծառերի սաղարթների ձայնն էր, ու նրանց մեջ թաքնված, տերեւներից դուրս եկող արեւի հետ ասոցացվող ձեր հայացքը՝ Սիրելի Ուսուցիչ, ձեր այնքան սաք հայացքը, որ այլեւս չի շոյելու մեր տեսողությունը: Այգին ամենուր ձեզ է հիշեցնում, ձեր հայացքը զգում եմ խոտի աշնանային հեւքի մեջ ու զարմանում, միշտ եմ զարմացել, թե ինչպե՞ս էիք այդքան ինքնորեն ու հարազատորեն ունկնդիրը նրանց շարժման այնքան անլսելի երաժշտության, ինչպես էիք զրուցընկեր դառնում նույնիսկ ամենափոքրիկ ծաղկի, ո՞նց էիք զգում բնության ամենաանշեշտ մասնիկի ջերմությունը եւ նրանց կյանքը ձերը դարձնում, խոսում հավասարը հավասարի հետ: Եվ ինչպես էր ձեր խորունկ միտքը կարողանում իր տեսողության մեջ պահել աշխարհի ամեն շարժումը՝ խոտի սուսափյունից, մեղվի բզզոցից, ծաղկի ժպիտից մինչեւ աստղերի տրոփը, մարդկանց հոգու տագնապն ու ցավը... ու կարեկցանքը աշխարհի ու մարդու հանդեպ:

Ու՝ կարեկցանքը:

Ես հովում եմ տերեւներից ինձ նայող արեւի լույսին, ու սիրտս ցավում է անդարձության խեղճությունից, թե ինչպես այլեւս չենք լսելու ձեր այնքան հարուստ ձայնը, ձեր սանչելի հայերենը, ձեր գրի պես մարգարտաշար, ռիթմիկ հնչեղությունը մայրենիի:

Որքան դժվար է:

Ահա այգին, որտեղ խմբագրությունից ձեր դառնալու ճանապարհին մեկ էլ լսում էի ձայնը՝ անուշս արտաբերելիս՝ հարազատ ու մտերիմ: Կանգնում էի, դառնում ձեր հմայիչ խոսքերի գերին, որքա՜ն շատ բան էի սովորում: Բայց, ահա վերջինը՝ կյանքի անիմաստ իմաստության մեջ որոնումների իմ հերթական հարցերի ձեր պատասխանները՝ եւ ինչո՞ւ այդքան մտահոգ այդ անգամ, ինչո՞ւ հուսահատ այդքան, կյանքի տախտուկին այլեւս անդիմադրելի-հոգնած. սիրտս կուչ եկավ այդ խոսքերից, ձայնի մեջ թաքնված մահվան տագնապից: Մոտալուտ մահվան: Անտես շարժումով միացրի ձայնագրիչը... Հիմա մետրոյի վագոնում ձեռքս շոշափեց սարքը, սեղմեցի կոճակը: Չէի ուզում լսել այդ խոսքերը. «Այս ամենը, ամենը կլինեն, ես չեմ լինի...», կարոտի ինչ կրակներ էին ընկղված հայացքի խորքում՝ մաքրամաքուր ապրած մարդու շիտակ հայացքում: Այդպիսի հայացք երբեք չեմ տեսել:

Այգու՝ նախորդ օրվա անձրեւի պղտոր ջրափոսերի մեջ ճերմակ թղթի կտորներ էին լող տալիս, գլուխս կախ լսում էի խոսքերը ձեր, ինձ թվում էր՝ կարապներ էին ջրի վրայով սահում, երաժշտություն էր հոսում, դա ձայն չէր, խոսքեր չէին-ինչ հին բույր ունեին, ինչ ազնվական փայլ, եւ որքան իմաստնություն ու իմացություն, որտեղի՞ց էին գալիս՝ Հին Չինաստանից՝ Լաո Ցզին, թե՞ Կոնֆիցիուսն էին խոսում ձեր միջով, թե՞ հին Աթենքի մշակույթն էր ալեկոծվում, հետո Միջնադարն ու Վերածնունդը, նոր ու նորագույն արվեստը, փիլիսոփայությունը, գրականությունն ու գիտությունը, Արեւագալի երգերը ու Կարմրաքարի լուռ մրմունջը:

Ինչ դժվար է ըմբռնումը զգացումի, որ այլեւս չենք լսելու ձեզ... Ինչ հարստություն է մեզանից հեռանում անդարձ: Օդն արձագանքում է, ծառերը հեւում են, կարոտում են, Սիրելի՛ Ուսուցիչ: Եվ որտե՞ղ են հաստվելու ճամփեքը, չէ՞ որ հորդորում էիք մեզ, որ ճիշտը կյանքն է: Ու հիմա լռություն է, կանաչ լռություն՝ կյանքից դուրս, կյանքի մեջ... Ծառերը փոխանցում են ձեր ձայնը՝ անլսելի-զգայելի: Ծաղկաձորի մասրենին ու դեղին կարձլիկ ծաղիկները Լմբատավանքի... տխուր, շատ տխուր են հիմա: Ահա անցնում եմ ու ամեն անկյունից այգու՝ ձեր ձայնը, մեր հայացքն է, այգին տրոփում է, սպասում...

Հեռանում եմ... ձեր վերջին գրքի վերջին էջը կարդալ չհասցրած: Փլվում է մեր գրականության, մեր կյանքի հոգեւոր սյունը:

Ես հազիվ եմ զսպում արցունքներս, Սիրելի Ուսուցիչ, մի՞թե հրաժեշտ ենք տալու ձեր՝ Աթենքի նարնջագույն արեւալույսով լի հայացքին: Չե՛մ հավատում:

Ձեր Օրագրության 2-րդ հատորին մակագրություն եք թողել: Ներիր, Սիրելի Ուսուցիչ, որ փոխանցում եմ դրանք.

«Անթվական, ժամանակից դուրս, հոգեհարազատությամբ, հուզաիմացական անհունում...»:

Չկա ժամանակ, չկա անցյալ, չկա թվական, միայն Անհունը ու... Լռություն:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Կարոլիս Սուրենյան

Հայաստան, 1950 թ. աշուն

1-ին էջից

Եվ ահավասիկ Կարոլիս Սարկավագյանը. գրող Կարոլիս Սուրենյանին ես գտա Ս. Հայաստանում, որուն հետ Հայաստան գալուս առաջին օրերին ես հանդիպեցի Երեւանում, «Արվեստ» ամսագրի խմբագրությունում, ուր Կարոլիսը վարում էր երաժշտության բաժինը... Բայց մեր ավելի սերտ հարաբերությունները սկսեցին վերջին տարիները. 5 տարի, 10 տարի, չեմ հաշվում, երեւի 20 տարի:

Հեռախոսը հնչում է. Կարոլիսն է, հարցնում է՝ ի՞նչ ես անում, տա՞նն ես, պատասխանում եմ, ասում եմ՝ արի՛: Մի կես ժամ հետո դռան զանգը հնչում է, դուռը բացում եմ՝ Կարոլիսն է, ասում եմ՝ հրամմե, ո՞նց ես, եւ Կարոլիսը արդեն սկսում է գանգատվել, հառաչանքներով: Ասում եմ՝ հալա ներս մտիր դռան սեմից՝ նոր սկսե գանգատներդ: Կարոլիսը ներս է մտնում: Ասում եմ՝ հիմա թեզի սուրճ մը կեփեմ, կխմես՝ նոր կսկսինք մեր զրույցը... Եվ ես երկու սուրճ կեփեմ՝ իրեն եւ ինծի համար, Մարին ալ անպայման մի բան կունենա՝ մի խմորեղեն հյուրասիրելու... Եվ Կարոլիսը կտեղավորվի իմ արվեստանոցումս գտնվող բազկաթոռներեն մեկուն, որը այս պահուն, երբ այս տողերն եմ գրում, ինձանից մի քանի մետր հեռու է եւ... դատարկ: Մտերիմ ընկերիս մասին է խոսակցությունը: Հիշեմ այստեղ, որ այն մի քանի ժամերը, որ Կարոլիսը ինձ հետ անցկացնում էր, ես իմ արվեստանոցում չէի նստում իր դիմացը եւ զրուցում... Ես նկարակալիս դիմաց շարունակում էի աշխատել իր հետ զրուցելով: Այդ վիճակը բնական էր եւ ընդունելի. ես զինք մտիկ էի անում, հետը զրուցում եւ նաեւ շարունակում էի իմ նկարներս նկարել, այսինքն՝ աշխատել... Ես իր խոսքին հետեւում էի ուշադիր, եւ մենք զրուցում էինք: Այդ տարիներուն Կարոլիսը, երբ այցելում էր մեզ, իր հետ բերում էր արդեն տպագրության պատրաստ մի ձեռագիր, որուն առաջին ընթերցող ես էի դառնում: Ինքը կարդում էր, եւ ես հաճույքով լսում էի: Իր վերջին տարիներու հրատարակված բոլոր գրքերի բնագրերին ես կարծեմ առաջինն եմ ծանոթացել: Երբեմն վիճում էինք: Մեր ձայները բարձրանում էին, եւ կինս՝ Մարին հայտնվում էր եւ ասում՝ ի՞նչ է, ինչո՞ւ եք գոռգոռում, խո՛ւլ եք, իրար չե՞ք լսում: Կիները չեն սիրում անկարգությունը: Վերջին տարիները Կարոլիսը ինձ զանգում էր կիրակի օրերը եւ հարցնում էր՝ ի՞նչ եմ անում, հարցնում էր՝ կրնա՞ գալ մեր տունը, անշուշտ ասում էի՝ արի, սպասում եմ:

Կարոլիս Սարկավագյանը Մելգոնյան եկավ, եթե չեմ սխալվում, 36 թվականին: «Մելգոնյանի» լավագույն սովորող ուսանողներից էր: Միշտ էլ լինում են լավագույններ, որ բազմաթիվ չեն անպայման: Կարոլիսը Մելգոնյանում արդեն սկսել էր գրել: Փայլուն յուրացրել էր Մելգոնյանի կրթական ծրագիրը, հիանալի տիրապետում էր հայերենին, գիտեր հունարեն: Սովորեց այնքան անգլերեն, որ Հայաստանում թարգմանեց բնագրից Գոլսուորդիի «Ֆորսայթների պատմությունը»: Մելգոնյանում սիրահարված ըլլալով Դոստոեւսկիին, կյանքի նպատակն էր արել մի օր անպայման թարգմանել Դոստոեւսկին բնագրից: Սովորել էր ռուսերեն եւ վերջում իրականացրեց իր երազը՝ «Կարամազով եղբայրները» թարգմանեց ընտիր հայերենով:

Կարոլիս Սուրենյանը մեկն էր այն արեւմտահայերից, որոնք փնտրում էին հայրենիք եւ ուզում էին կրթվել հայրենի համալսարաններում եւ աշխատել հայրենիքում: Բայց ողբերգությունը այն էր, որ Կարոլիսը իբրեւ լավագույն սովորող հնարավորություն ուներ իր ուսումը շարունակելու Բելգիայի համալսարաններում. կար կրթաթոշակ, որից կարող էր օգտվել: Կարոլիսը եթե չգար Ս.Հայաստան եւ ուսում ստանար Բելգիայում եւ նորից դառնար գրող ու գրեր արեւմտահայերեն, ի՞նչ պիտի ըլլար իր կյանքը, ի՞նչ էր իրեն համար վերապահել ճակատագիրը՝ չենք գիտեր: Բայց տասը տարի Հայաստանում Չեկայի ձեռքը չէր տանջվելու՝ ատիկա անվիճելի է: Կարոլիսը մինչ ի մահ չհաշտվեց այդ վիրավորանքներու հետ, որոնց ենթարկվեց Չեկայի հարցաքննություններով: Զազրելի երկիր Սովետական Միություն:

Կարոլիսը շարունակեց գրել, փառք Աստուծո, շնորհիվ իր ընկերներուն, մանավանդ Սարգիս Խաչենցի եւ Երվանդ Տեր-Խաչատրյանի (Յուրի Խաչատրյան)՝ իր ձեռագրերը տպվեցին եւ ինքը կարեւոր ավանդ ունեցավ մեր մշակույթին մեջ:

Կարոլիսը վերջին ամիսներում քիչ էր ինձ այցելում: Ես զինք միշտ ընդունել էի գրկաբաց: Մի օր էլ զանգեց, որ՝ ինձ լավ չեմ զգում: Հարցնում եմ՝ ի՞նչ է պատահել: Ասաց՝ որ այգում նստում էի, կարծեմ մրսել եմ, ինձ լավ չեմ զգում, կարծեմ թոքաբորբ ունեմ: Ասացի՝ ես երեք անգամ թոքաբորբով ծանր հիվանդացել եմ: Երեք անգամն էլ ինձ մահից փրկել է Հովիկ Սարկավագյանը, նույն ինքը՝ Կարոլիս Սուրենյանի որդին, որ հանրապետության գլխավոր մասնագետն է կրծքավանդակի հիվանդություններու եւ լավագույն վիրաբույժը: Մտածում եմ, որ ընկերս անտեր չէ, բայց՝ Կարոլիսը իրեն լավ չի զգում... Երեք անգամ ինձ զանգեց, որ իրեն նկարագրեմ իմ վիճակը, երբ ես թոքաբորբով հիվանդ էի: Ես տեսնում էի, որ իր «թոքաբորբի» վիճակին եւ ունեցածս վիճակի միջեւ որոշ տարբերություններ կան, բայց իրեն հույս էի ներշնչում, որ շուտով ամեն բան կանցնի եւ ինքը նորից լավ կզգա, մանավանդ որ իր կողքին ունի կրծքավանդակի լավագույն մասնագետ, հայրն է սանչելի մի անձնավորության: Մեկ էլ իմանում եմ, որ Կարոլիսը շատ ծանր հիվանդ է, իր ունեցածը թոքաբորբ չէ: Այդ մասին ես տեղեկացա մի քանի շաբաթ առաջ, եւ հանկարծ, երեկ, իմացա, որ ընկերս մահացել է: Ինձանից երկու տարի էլ փոքր էր:

Ես շնորհակալ եմ, որ այսքան երկար ապրեցի, որ կարողացա իրականացնել իմ որոշ գործերս, որոնք եթե ավելի շուտ մահանայի, չպիտի կարողանայի իրականացնել: Այո, բայց չէի մտածում, որ երկար ապրելով՝ ես նաեւ պիտի իմանամ, տեսնեմ ընկերոջս մահը եւ պիտի գրեմ այդ մասին... Այստեղ հիշեցի հին եգիպտական անեծք մը, որ ասում է՝ բոլոր ընկերներդ թաղես եւ նոր մահանաս:

Վարդան Մինասյան. «Մեծ պատասխանատվություն է ընկած տղաների վրա»

Հայաստան-Մակեդոնիա ընտրական մրցախաղի նախօրեին ՀՀ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հանդիպեց լրագրողներին: Նա նշեց, որ առաջիկա երկու խաղերի նախապատրաստությունը նորմալ է ընթանում, թեեւ որոշակի խնդիրներ են ծագել: Ինչպես հայտնի է, Արազ Օզբիլիսը վնասվածքով էր ժամանել Երեւան, ուստի արդեն մեկնել է Հոլանդիա: Յավոք երկու օր առաջ կրկնվել է Ռոբերտ Արզումանյանի վնասվածքը, որի պատճառով նա 90 տոկոսով չի մասնակցի մակեդոնացիների հետ հանդիպմանը: Կենտրոնական մյուս պաշտպան Հրայր Մկոյանն էլ որակազրկված է: Այնպես որ Մինասյանին մնում է ընտրություն կատարել Վալերի Ալեքսանյանի, Արթուր Յուզբաշյանի եւ Վարազդատ Հարոյանի միջեւ:

Մնացած ֆուտբոլիստների մարզավիճակը նորմալ է եւ տղաներն ամենայն պատասխանատվությամբ են նախապատրաստվում հանդիպմանը: Ըստ մարզչի, այդ պատասխանատվությունը չի կարող չազդել տղաների հոգեբանության վրա, քանի որ մակեդոնացիների հետ խաղում միայն հաղթանակ է անհրաժեշտ, առաջին պլան է մղվում հանդիպման արդյունքը: Նա նաեւ հույս հայտնեց, որ հանդիպման շուրջը ստեղծված մեծ հետաքրքրությունն ու աժիոտաժը չեն խանգարի իր սաներին ցուցադրելու իրենց ողջ կարողություններն ու ցանկալի արդյունքի հասնելու, ինչը նախկինում տեղի չունեցավ Թուրքիայի եւ Ռուսաստանի հավաքականների հետ հանդիպումներում: Շատ կարեւոր է նաեւ արագ արդյունքի հասնելը, թեեւ բացառված չէ, որ դա հակառակ ազդեցությունն ունենա: Ամեն դեպքում Հայաստանի հավաքականը ձգտելու է այսօրվա խաղում ագրեսիվություն դրսեւորել հենց խաղասկզբից, ճնշում գործադրել մրցակցի վրա: Վարդան Մինասյանը հույս ունի, որ մակեդոնացիներին կհաղթեն:

Գլխավոր մարզիչը նշեց, որ սլովակների հետ 2-րդ խաղակեսում հավաքականի ցուցադրած խաղը շատ մոտ էր իդեալականին: Սակայն բացասական մի պահ կար, որ յուրաքանչյուր խփած գոլից հետո մեր դարպասի մոտ վտանգավոր իրադրություն էր ստեղծվում: Դա մարզիչը բացատրեց հոգեբանական գործոնով, նշելով, որ գուցե մերոնք երկար են տոնում խփած գոլը:

Մակեդոնացիների մասին Վարդան Մինասյանը լավ կարծիքի է: Նա նշեց, որ իրեն շատ է դուր եկել մրցակցի խաղը, թեեւ մակեդոնացիները պարտվել են: Ըստ նրա, Մակեդոնիայի հավաքականը շատ կազմակերպված թիմ է, Երեւանում ավելի անկաշկանդ կգործի, քանի որ արդյունքը մակեդոնացիների համար այնքան էլ էական չէ: Հավաքականի կազմում կան անհատապես ուժեղ ֆուտբոլիստներ: Ճիշտ է, Գորան Պանդեւն ու Աջիմ Իբրահիմին հանդիպմանը չեն մասնակցելու, սակայն դա բնավ էլ չի թուլացնի մրցակցին:

Վարդան Մինասյանը գտնում է, որ հարկավոր է շատ ուշադիր լինել մրցակցի նկատմամբ, անտեղի դեղին քարտերից խուսափել ու ամեն ջանք ներդնել վճռորոշ խաղում հաղթանակի հասնելու համար: Այդ հարցում մարզական բախտի գործոնն էլ իր դերն ունի: Սակայն մարզչի համոզմամբ բախտն ուղեկցում է նրանց, ովքեր շատ են ցանկանում հաղթել: Ամեն դեպքում մարզիչը լավատես է եւ հույս ունի, որ հավաքականին աջակցելու եկած ֆուտբոլասերներն էլ բարձր տրամադրությամբ կհեռանան մարզադաշտից: Նա չկիսեց ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի այն կարծիքը, որ եթե հավաքականին չհաջողվի Եվրո-2012-ի եզրափակիչի ուղեգիր նվաճել, ապա դա պետք է ձախողում համարել:

Հայաստան-Մակեդոնիա. հաղթանակի բարձր գինը

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն այսօր իր պատմության մեջ ամենավճռորոշ հանդիպումներից մեկը կանցկացնի՝ հյուրընկալելով Մակեդոնիայի ընտրանուն: Մրցակիցների առաջին հանդիպումը, որ կայացավ անցյալ տարի, դրամատիկ ելք ունեցավ: Այդ խաղում առաջինը հաջողության հասան մեր ֆուտբոլիստները, երբ 41-րդ րոպեին Յուրա Մովսիսյանը գրավեց մրցակցի դարպասը: Սակայն մեկ րոպե անց դատի տերերը վերականգնեցին հավասարակշռությունը:

Երկրորդ խաղակեսում պատմությունը կրկնվեց: Ավելացված ժամանակում Էդգար Մանուչարյանը մեն-մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, գրավեց դարպասը: Թվում էր, թե այդ գնդակը հաղթական կլինի մեր հավաքականի համար: Սակայն հետեւեց դատի տերերի գրոհը եւ անհասկանալիորեն Արարատ Առաքելյանն օդային մենամարտում ձեռքով հեռացրեց գնդակը, որի համար ՀՀ հավաքականը պատժվեց 11 մ հարվածով: Նաումոսկին մակեդոնացիներին փրկեց պարտությունից:

Իհարկե, շատ ցավալի կլինի, եթե այդ 2 միավորի կորուստն ի վերջո հնարավորություն չընձեռի մեր հավաքականին շարունակելու պայքարն ուղեգրի համար:

Հայաստանի եւ Մակեդոնիայի հավաքականները 3-րդ անգամ են հայտնվել ընտրական մրցաշարի միեւնույն խմբում: Մրցակիցների առաջին դիմակայությունն ավարտվել է մեր օգտին: 1996-ին Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում Երեւանում խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 2-2: Ընդ որում մեր հավաքականը Ռազմիկ Գրիգորյանի եւ Արմեն Շահգելդյանի խփած 2 գոլերի շնորհիվ հաղթում էր: Իսկ ահա Սկոպիեյում 1995-ի սեպտեմբերի 6-ին կայացած խաղում ՀՀ հավաքականը 2-1 հաշվով կամային հաղթանակ տոնեց: Դա ընտրական մրցաշարում մեր ֆուտբոլիստների անդրանիկ հաղթանակն էր: Մեր հավաքականի կազմում կրկին աչքի ընկան Ռազմիկ Գրիգորյանն ու Արմեն Շահգելդյանը:

Մրցակիցների 2-րդ դիմակայությունը տեղի է ունեցել 2006-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում: Առաջին խաղում մեր հավաքականը ֆրանսիացի Բեռնար Կազոնիի գլխավորությամբ

հյուրընկալվելիս պարտվեց խոշոր՝ 0-3 հաշվով: Երեւանյան խաղում էլ, որում հավաքականը գլխավորում էր հոլանդացի Հենկ Վիսմանը, մեր ֆուտբոլիստները պարտություն կրեցին 1-2 հաշվով: Մեր թիմից միակ գոլի հեղինակն Էդգար Մանուչարյանն էր:

Ինչ խոսք, այսօրվա հանդիպումը մրցակիցների միջեւ կայացած նախորդ մրցախաղերից ամենավճռորոշն է, որում հաղթանակի արժեքը մեր ֆուտբոլիստների համար շատ բարձր է: Ընտրական 2-րդ խմբում այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ միայն երկու հաղթանակները մեր հավաքականին անցումային խաղերին մասնակցելու եւ եզրափակիչի ուղեգիրը վիճարկելու իրավունք կտան: Շատ կարեւոր են նաեւ այսօր կայանալիք Սլովակիա-Ռուսաստան, Անդորրա-Իռլանդիա հանդիպումները: Իսկ հանգուցալուծումը տեղի կունենա հոկտեմբերի 11-ին, երբ բացի Դուբլինում կայանալիք Իռլանդիա-Հայաստան մրցախաղից, կանցկացվեն նաեւ Մակեդոնիա-Սլովակիա եւ Ռուսաստան-Անդորրա հանդիպումները:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ռուսաստան	8	5	2	1	10-4	17
2. Իռլանդիա	8	4	3	1	11-6	15
3. Հայաստան	8	4	2	2	17-7	14
4. Սլովակիա	8	4	2	2	6-8	14
5. Մակեդոնիա	8	2	1	5	6-9	7
6. Անդորրա	8	0	0	8	1-17	0

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Ալոյանն ու Հայրապետյանը կիսաեզրափակիչում են

Բաքվում ընթացող բռնցքամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչներն արդեն ավարտել են ելույթները՝ մնալով առանց մեդալների: Ուստի մարզասերներին այժմ մնում է երկրպագել Ռուսաստանի հավաքականում հանդես եկող հայ բռնցքամարտիկներին: Բարեբախտաբար նրանք հաջող են ելույթ ունենում եւ ոչ միայն օլիմպիական ուղեգրեր են նվաճել, այլեւ առնվազն ապահովել են բրոնզե մեդալը:

Դավիթ Հայրապետյանը (49 կգ) եւ Միշա Ալոյանը (52 կգ) քառորդ եզրափակիչում հերթական հաղթանակները տոնելով, մտան հաջորդ փուլ: Դավիթի մրցակիցն իսպանացի Խոսե դե Լա Նիեւեն էր, որին հայ բռնցքամարտիկը պարտության մատնեց 15-8 հաշվով եւ իր համար նվազագույնն ապահովեց բրոնզե մեդալը: Այսօր կայանալիք կիսաեզրափակիչ մենամարտում Դավիթին բավականին լուրջ մրցակից է սպասում: Նա մրցելու է օլիմպիական չեմպիոն, չինացի Ջու Շիմինի հետ:

Մինչեւ 52 կգ քաշայինների մրցավեճում Միշա Ալոյանը բավականին համառ մրցապայքարում առավելության հասավ ադրբեջանցի Էլվին Մամիշզադեի նկատմամբ (14-12): Նրա հաջորդ մրցակիցն ամերիկացի Ռոշի Ուորենն է, որը 14-9 հաշվով հաղթել է Անգլիայի ներկայացուցիչ Հալիդ Յաֆայիին:

Աշխարհի առաջնությունում առայժմ բոլորից հաջող են հանդես գալիս ուկրաինացի բռնցքամարտիկները, որոնցից 5-ը շարունակում են պայքարը: Ղազախստանը կիսաեզրափակիչում ներկայացված է 4 բռնցքամարտիկով: Ռուսաստանը, Անգլիան եւ Կուբան ունեն 3-ական բռնցքամարտիկ:

Դարչինյանը կվիճարկի WBA-ի վարկածով չեմպիոնական գոտին

Երեւանում IBO-ի վարկածով թեթեւագույնքաշային կարգում աշխարհի չեմպիոնի գոտին հաջողությամբ պաշտպանելուց հետո Վախթանգ Դարչինյանը մտադիր է նվաճել նաեւ WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Դրա համար 35-ամյա Վախթանգին անհրաժեշտ է հաղթել 26-ամյա պանամացի Անսելմո Մորենոյին: Նրանց մենամարտը նշանակված է դեկտեմբերի 3-ին, Լոս Անջելեսում:

Մորենոն պրոֆեսիոնալ ռինգում 33 մենամարտ է անցկացրել, որից 31-ում հաղթել է, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է մեկ պարտություն: Վախթանգ Դարչինյանի հերթական մենամարտը կլինի 42-րդը: Վախթանգը 37 հաղթանակ է տոնել, մեկն ավարտել է ոչ-ոքի, կրել է 3 պարտություն:

Զոն Տոշակն իր սաներից արդյունավետ խաղ է ակնկալում

Երեկ ժամը 18-ին Մակեդոնիայի հավաքականը մարզում անցկացրեց «Հանրապետական» մարզադաշտում: Մինչեւ մարզումը սկսելը կայացավ հավաքականի գլխավոր մարզիչ Զոն Տոշակի կարճատեւ մամուլի ասուլիսը: Նա բավական լավ կարծիքի է Հայաստանի հավաքականի մասին՝ համարելով խմբի հանելուկը: Հայ ֆուտբոլիստների վարպետության մասին է վկայում այն, որ նրանք խմբում բոլորից արդյունավետ են գործում: Տոշակը ՀՀ հավաքականում մեծ առաջընթաց է նկատում: Ըստ Տոշակի, ընտրական 2-րդ խմբում ընդգրկված բոլոր 4 հավաքականներն էլ հավակնում են խաղարկվող ուղեգրերին:

Զոն Տոշակը հումորով վերաբերվեց այն տեղեկատվությանը, թե Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանն առաջարկել է երկրի բյուջեից խոշոր պարգեւատրում տրամադրել Մակեդոնիայի հավաքականին, եթե վերջինս հաղթի հայերին: «Հիանալի է: Կարելի է նաեւ ռուսներից, իռլանդացիներից եւ սլովակներից պարգեւավճար պահանջել: Երկու տարի աշխատել եմ Թուրքիայում, սակայն Էրդողանին չեմ ճանաչում», նշեց մարզիչը:

Նա գտնում է, որ հավաքականի ֆուտբոլիստները պետք է խաղան երկրի ու ժողովրդի համար: Իսկ եթե խաղում շահ փնտրեն, ապա պետք է փոխեն ֆուտբոլիստի մասնագիտությունը: Տոշակն իր խաղացողներից առաջիկա խաղում արդյունավետ խաղ է ակնկալում, թեեւ հավաքականի կազմում բացակայելու է հիմնական ռմբարկու Գորան Պանդեւը: Գուցե նրա բացակայությունը լրացուցիչ խթան կլինի մակեդոնացիների համար՝ ցուցադրելու իրենց առավելագույն հնարավորությունները:

Նալբանդյանը մտավ հաջորդ փուլ

Տոկիոյում ընթացող թենիսի մրցաշարում 2-րդ հաղթանակը տոնեց Դավիթ Նալբանդյանը՝ երկու խաղափուլում 7-6, 6-2 հաշվով պարտության մատնելով խորվաթ Իվան Դոդիգին: Քառորդ եզրափակիչում Նալբանդյանը կմրցի բրիտանացի Էնդի Մարեյի հետ, որն առավելության հասավ ամերիկացի Ալեխս Բոգոմոլովի նկատմամբ (6-1, 6-2):

Պայքարը շարունակում է նաեւ Ռաֆայել Նադալը, որը հաղթեց Միլոշ Ռաոնիչին (7-5, 6-3): Հաջորդ փուլի ուղեգիր են նվաճել նաեւ Սանտյագո Հիրալդոն, Մարդի Ֆիշը, Բեռնարդ Տոմիչը, Ռադեկ Շտեպանեկը եւ Դավիթ Ֆերռերը:

24 մլն եվրո Տեւեսի դիմաց

«Մանչեսթր Սիթին» համաձայն է թուրքական «Ֆեներբահչեին» վաճառել Կառլոս Տեւեսին 24 մլն եվրոյով, փոխարենը ստանալով թիմի եւ Սլովակիայի հավաքականի հարձակվող Միրոսլավ Ստոխին: «Ֆեներբահչեն» պատրաստ է կատարել գործարքի 2-րդն մասն ու Ստոխին տրամադրել անգլիական ակումբին, իսկ ահա գումարի հարցում մտադիր է վճարել միայն 16 մլն եվրո:

Հիշեցնենք, որ Տեւեսը «Բավարիայի» հետ չեմպիոնների լիգայի խաղում հրաժարվել էր փոխարինման դուրս գալուց, որի հետեւանքով ակումբի ղեկավարության կողմից որակազրկվել է:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Մահմուդ Աբբաս. եկել է պաղեստինյան գարնան ժամանակը

«Ես եկել եմ Պաղեստինից, խաղաղության երկրից», Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում երեկ հայտարարեց Պաղեստինի նախագահ **Մահմուդ Աբբասը**: Պաղեստինի պատմական էխսկուրսի եւ «իսրայելյան լայն օկուպացիայի» ու մինչեւ օրս էլ «օկուպացված մնացած տարածքների» ներկայացման ավարտին Աբբասի հարցն էր, թե ինչքան պետք է սպասի պաղեստինցի ժողովուրդը: Սրան Աբբասն ավելացրեց Գազայի հատվածում պատերազմը, զոհերը, ճնշումներն ու իսրայելյան բանտերում գտնվող «6000 պաղեստինցիների» փաստը, որոնցից «21 խորհրդարանական ներկայումս հացադուլ են սկսել»:

Պաղեստինը, ըստ Աբբասի, ՄԱԿ-ից հետո քայլեր է ձեռնարկում նաեւ Եվրոպայի խորհրդում: «Եկել է պաղեստինյան գարնան ժամանակը», արաբական գարնան հովերով հայտարարեց Մահմուդ Աբբասը, շեշտելով, որ «պաղեստինյան գարուն» ասելով հասկանում են ճանաչել անկախությունը, «ազատվել օկուպացիայից, ճանաչվել ու կայունության հասնել տարածաշրջանում»:

«Գործընկեր հանուն ժողովրդավարության» կարգավիճակով բազմաթիվ պարտավորություններ ստանձնած Պաղեստինին Եվրոպայի հետ, Աբբասի ներկայացմամբ, միավորում են «ընդհանուր արժեքները՝ արդարության, եղբայրության, արդարության, եվրոպայի ժողովուրդների արժեքները, որ նաեւ արաբական աշխարհի արժեքներն են»:

Ժամանակին Եվրոպայի կենտրոնում կռվախնձոր եղած Ստրասբուրգ քաղաքում իր ելույթը խորհրդանշական համարելով՝ Մահմուդ Աբբասը, որպես արաբական աշխարհից ԵԽԽՎ-ի հետ առաջին գործընկեր դարձած երկրի ներկայացուցիչ, հայտարարեց. «1947-ին ընդունված ՄԱԿ-ի 181 բանաձեւը երկու պետության հիմնադրում հայտարարեց, մեկը՝ Իսրայելը, որ իրականացավ, մյուսը՝ Պաղեստինը, որ դեռ ցերեկվա լույսը չի տեսել: Մենք այստեղ ենք եկել այդ լույսը խնդրելու: Դա մեր օրինական իրավունքն է երաշխավորված միջազգային իրավունքով»: «Մենք վստահում ենք ձեզ եւ հավատացած ենք, որ դուք մեզ չեք լքի ու թողնի մենակ», դիմելով վեհաժողովականներին եզրափակեց իր ելույթը Մահմուդ Աբբասը՝ արձագանքվելով բուռն ծափահարություններով:

Վեհաժողովականների հարցերին Աբբասը շատ կարճ ու մեծ մասամբ, թերեւս ոչ ճիշտ թարգմանության պատճառով, չհամապատասխանող պատասխաններ տվեց: Այդուհանդերձ պատասխաններում Աբբասը լավատեսորեն նշեց, որ մի օր պաղեստինցին ու իսրայելցին իրար կողքի են ապրելու, որ Իսրայելն էլ հասկանալու է արաբամուսուլմանական աշխարհում ապրելով՝ Պաղեստինը ճանաչելու կարեւորությունը, որ Պաղեստինում հրեա վերաբնակիչներ չեն լինի:

Հայաստանից **Նաիրա Զոհրաբյանի** հարցին, թե ինչ կարգավիճակ կունենան հին ժամանակներից ի վեր առկա Երուսաղեմի հայկական թաղամասերը, Աբբասը, գուցե էլի թարգմանության պատճառով, միայն նշեց, որ գործող կրոնական համայնքները Երուսաղեմում ազատ են գործելու եւ իրականացնելու իրենց ծեսերը:

Ելույթին հետեւած ասուլիսում արդեն Պաղեստինի հարցը ննջարկելու առնչությամբ ԱՄՆ-ի վետոյի հավանականության մասին Աբբասը նշեց, որ դա կարող է զայրացնել պաղեստինցիներին, բայց «դա քաղաքական զայրույթ է»: Իսկ Եվրոպայի համար արդեն ժամանակն է ճանաչելու Պաղեստինը, քանի որ, Աբբասի խոսքերով, «ինչքան շուտ (ճանաչեն-Ա. Հ.), այդքան լավ»:

Ինչ վերաբերում է Իսրայելի հետ հարաբերությունների վատթարացման ֆոնին Պաղեստինին աջակցող Թուրքիայի դերակատարությանը, ապա Աբբասը հայտարարեց, թե թուրք-իսրայելյան հարաբերությունների նորմալացումը «կարող է դրական ազդել խաղաղ բանակցությունների վրա»: Աբբասը շեշտեց. «Եթե Իսրայելը ներողություն խնդրի Թուրքիայից, Թուրքիայի դերը տարածաշրջանում նորից կդառնա արդյունավետ»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ

Էլմար Մամեդյարովի «գյուտը»

1-ին էջից

Եվ այսպես, ըստ Մամեդյարովի, «Ղարաբաղի կարգավիճակի որոշման սուբյեկտ են ադրբեջանական եւ հայկական համայնքները»: Սա նոր շեշտադրում է: Նախկինում պաշտոնական Բաքուն ասում էր, որ «կարգավիճակի հարցը պետք է որոշվի Լեռնային Ղարաբաղ ադրբեջանցիների վերադարձից հետո»: Միաժամանակ էլ ադրբեջանական կողմը չէր ընդունում Արցախում անցկացված հանրաքվեի արդյունքները, «քանի որ ադրբեջանցիները դրան չեն մասնակցել»:

Որ դա շատ խախուտ «կռվան» է, այժմ, հավանաբար, հասկացել են նաեւ Բաքվում: Այսինքն, 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂ-ում այդ պահի դրությամբ ապրող ադրբեջանցիները կարող էին, հնարավորություն ունեին մասնակցելու հանրաքվեին եւ արտահայտելու իրենց կամքը: Իրենց իրավունքն ու ընձեռած հնարավորությունը, սակայն, նրանք չեն օգտագործել: Դա էլ հենց կամքի արտահայտություն է: Ճիշտ այնպես, ինչպես որ մարդիկ չեն մասնակցում ընտրություններին: Բայց դրանից վերջիններս անօրինական չեն ճանաչվում:

Մինչդեռ այսօր Մամեդյարովը շրջանառության է դնում «Ղարաբաղի կարգավիճակի որոշման համայնքային իրավունքի» գաղափարը: Կրկնենք, մեր դիտարկումները միայն տեսական են: Կա՞ երաշխիք, որ «արդեն ԼՂ վերադարձած «ադրբեջանական համայնքը» ցանկություն կունենա մասնակցելու «Ղարաբաղի կարգավիճակի որոշման» գործընթացին»: Այդպիսի երաշխիք ոչ ոք տալ չի կարող: Նույնիսկ Իլհամ Ալիեւը: Երկրորդ, ի՞նչ կարգավիճակով է «ԼՂ վերադառնալու «Ղարաբաղի ադրբեջանական համայնքը», որպեսզի «կողք կողքի ապրի» հայերի հետ»: Չէ՞ որ այդ մարդիկ այսօր Ադրբեջանի քաղաքացիներ են, իսկ «պիտի վերադառնան մի տեղաշրջան, որի կարգավիճակը որոշվելու է աղագայում»: Իսկ մինչ այդ « վերադարձածները» համարվելու են ադրբեջանահպատա՞կ, թե՞... Երրորդ, «վերադարձածները» ի՞նչ հիմքով են «կազմակերպելու իրենց պետական եւ հանրային կյանքը, կառավարման ի՞նչ մարմիններ եւ ինչպե՞ս են ձեւավորելու»: Չէ՞ որ Իլհամ Ալիեւն ասում է, որ «հանրաքվե կարող է անցկացվել 100 տարի հետո»: Այդքան ժամանակ այդ մարդիկ ԼՂ-ում «ապրելու են օդից կախվածի՞ կարգավիճակով»:

Սրանք հարցեր են, որոնց պատասխանն Էլմար Մամեդյարովը պետք է ունենա նախքան «ադրբեջանական համայնքի վերադարձի» մասին սադրիչ հայտարարությունն անելը: Այլ բան է շեշտել «իրենց բնակության նախկին վայրեր վերադառնալու իրավունքը», որ զուտ հումանիտար հարթության խնդիր է եւ չի առնչվում պետության ճանաչվածության-չճանաչվածությանը, եւ բոլորովին այլ, երբ «Ղարաբաղի կարգավիճակի որոշման սուբյեկտությունը բաժանվում է «երկու իրավահավասարազոր համայնքների միջեւ»»: Սա ոչ այլ ինչ է, քան միջազգային միջնորդության առաջարկի ակնհայտ նենգափոխում:

Այդ դեպքում պետք է ընդունել, որ Ադրբեջանում ապրող բոլոր էթնիկ փոքրամասնությունները ցանկացած հարցում իրավասու են կամք արտահայտելու առանձին: Մինչդեռ դա այդպես չէ: Քանի որ կամարտահայտության հիմքում դրված է ոչ թե էթնիկ պատկանելության, այլ՝ քաղաքացիության սկզբունքը: Որեւէ մեկը թալիշներին, լեզգիներին, ռուսներին, հրեաներին չի հարցրել՝ համաձա՞յն են նրանք, որ ադրբեջաներենը հռչակվի միակ պետական լեզու: Որեւէ մեկը հնարավորություն չի ընձեռել, որ էթնիկ փոքրամասնություններն իրենց կամքն արտահայտեն Ադրբեջանի՝ որպես միասնական-ունիտար պետության հարցում: Քանի որ ընդունվել է, որ «Ադրբեջանը նրա բոլոր քաղաքացիների՝ անկախ ազգությունից, կրոնական պատկանելությունից, հայրենիքն է»:

Ադրբեջանցի քաղաքագետ եւ խորհրդարանի պատգամավոր Ռասիմ Մուսաբեկովը բավական դիպուկ եւ անաչառ է ձեւակերպել բանավեճի թեման. «Լեռնային Ղարաբաղը պետք է լինի անկախ, թե՞ Ադրբեջանի «կազմում ունենա լայն ինքնավարություն»»: Խնդիրն այս է: Լեռնային Ղարաբաղն այսօր փաստացի անկախ պետություն է: Ադրբեջանը դա վիճարկում է: Միջնորդներն առաջարկում են «նոր հանրաքվեի» գաղափարը: Եվ իմաստ չունի «գյուտ արածի» տեսք ընդունել: Պետք է ընդամենը պատասխանել մի պարզ հարցի. «Ադրբեջանական իշխող էլիտան ընդունա՞կ է քաղաքական կամք դրսեւորել եւ ընդառաջել միջնորդներին»: Մնացածը դատարկ հռետորաբանություն է, որ ոչինչ չի տալիս:

ԿՈՐԵԼ Է
Ալբերտ Կորյունի Մկրտչյանի 1999-2000 ուս. տարվա թիվ 009784 ատեստատը՝ տացված Երեւանի թիվ 97 ավագ դպրոցից: Հեռ.՝ 093501001

ՀՐԱԺԵՇՏ

Պարի լեգենդ՝ Վանուշ Խանամիրյանն այլեւս մեզ հետ չէ

Պարարվեստը եւ ողջ հայ ժողովուրդը ցավում են ՀՀ ժողովրդական արտիստ, բազմաթիվ պետական մրցանակների արժանացած, պարի լեգենդ Վանուշ Խանամիրյանի անվերադարձ հրաժեշտի առիթով: Նա մեկն էր այն քչերից, ում մեծությունը մեր ժողովուրդն ընդունում էր անվերապահորեն, հարգում ու սիրում անսահման սիրով: Այսօր աշխարհի բոլոր հայաշատ գաղթօջախներում Վանուշ Խանամիրյանի սաները շարունակում են իրենց ուսուցչից ստացած պարարվեստի գաղտնիքները փոխանցել նոր սերնդին՝ պահպանելով ազգայինը: Իսկ այդ ուղղությունը նրանց տվել էր Խանամիրյան մեծությունը, որը դարձել է ամենքի համար լեգենդ ու այդպես էլ կմնա բոլորի հիշողության մեջ: Հանգչիր խաղաղությամբ, սիրված ու հարգված վարպետ, ու քեզ հրաժեշտ տալուց սիրով կարտաբերենք քո խոսքերը. «Ժողովրդ ջան, ձեր ցավը տանեմ, ձեր հոգուն մեռնեմ, ես բոլորիդ սիրում եմ...»: Մենք էլ քեզ ենք սիրել ու սիրելու:

Թաղման կառավարական հանձնաժողովի որոշմամբ, Վ. Խանամիրյանի հոգեհանգիստը տեղի կունենա այսօր, ժամը 18-ին, Կոնդի Սբ. Հովհաննես եկեղեցում, իսկ քաղաքացիական հոգեհանգիստը՝ վաղը ժամը 12-ից 14-ը, Օպերայի ֆոյեում: Թաղումը՝ քաղաքային պանթեոնում:

Մ. Մ.

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը 2011թ. նոյեմբերի 10-ին հայտարարում է բաց մրցույթ «Երեւանի ջրամատակարարման ուղեմաս» բաց բաժնետիրական ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամի (վերստուգողի) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ունեն.

- Տնտեսագիտություն (էկոնոմիկա) եւ կառավարում (մենեջմենթ) մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն եւ մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային փորձ կամ՝
- Բարձրագույն կրթություն եւ մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացնելու օրվան նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն չորս տարվա մասնագիտական աշխատանքային փորձ

- Մրցույթին մասնակցելու նպատակով մասնագիտական աշխատանք է համարվում՝ հաշվապահական հաշվառման, ֆինանսական, հարկային, աուդիտորական, տնտեսագիտական այլ բնագավառներում ղեկավարի, մասնագետի, փորձագետի, հաշվապահի, իրավաբանի, մեթոդաբանի, վերահսկիչի, ֆինանսական գծով տեսուչի, խորհրդատուի, գիտական աշխատողի, ինչպես նաեւ կազմակերպությունների ղեկավարների, ֆինանսատնտեսական աշխատանքների գծով նրանց տեղակալների, ֆինանսական, հաշվապահական հաշվառման, տնտեսագիտական, իրավաբանական ստորաբաժանումների ղեկավարների, նրանց տեղակալների աշխատանքը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝

▼ գրավոր դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձեւը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

▼ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ներ)ի, վկայական(ներ)ի, աշխատանքային գրքույկի պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

▼ հայտարարություն՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված չլինելու վերաբերյալ,

▼ հայտարարություն այն մասին, որ ինքը դատապարտված չի եղել կամ դատվածությունը օրենսդրությամբ սահմանված կարգով հանված կամ մարված է

▼ հայտարարություն այն մասին, որ ինքը չի հիմնադրել եւ չի հանդիսանում որեւէ կազմակերպության հիմնադիր, ինչպես նաեւ չի զբաղվում ձեռնարկատիրական գործունեությամբ,

▼ անձնագիր եւ անձնագրի պատճենը,

▼ մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

▼ արական սեռի անձանց համար՝ նաեւ զին. գրքույկի պատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր եւ զորակոչային տեղամասին կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթն անցկացվում է թեստավորման եղանակով՝ գրավոր:

Թեստային առաջադրանքների փաթեթը (մագնիսական կրիչով կամ պատճենահանմամբ՝ դիմումատուի հաշվին) տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության անձնակազմի կառավարման բաժինը՝ փաստաթղթերի ընդունումից հետո:

Մրցույթը կանցկացվի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում (ք. Երեւան, Տիգրան Մեծի 4) 2011թ. նոյեմբերի 10-ին, ժամը 11.00-ին:

Դիմումները կարող են ներկայացվել՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության անձնակազմի կառավարման բաժին՝ (ամեն օր՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից) մինչեւ ժամը 12.30-ը:

Մրցույթին մասնակցելու համար դիմումների (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացման վերջին ժամկետն է 2011թ. նոյեմբերի 09-ը, ժամը 12.30-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն կամ զանգահարել 52-65-67, 52-35-36 հեռախոսահամարներով:

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝6.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: